№ 280 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1911 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 280

ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆոն № 67.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԱՌԱՋԻԿԱՅ 1912 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ
ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 2 ամսվանը՝ 2 ր., 1 ամսվանը՝ 85 կ. և 15 կ. պոստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն, և միևնոյն ժամանակ 40 կ. նամականիշ։

Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

„ՄՇԱԿԻ" ԳՐԱՍԵՆԵԱԿԻՑ

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեան գրասենեակին հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
Ուրբաթ, դեկտեմբերի 23-ին
ՕՊԵՐԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ՊԱԼԻԵՎԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՅԱՅՏՆԻ ՈՅԺԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ
ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐ. ԸՆԿ. ՕԳՏԻՆ
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ
առաջին անգամ ներկայ սէզոնում
ՄԱՐԳԱՐԻՏ ՈՐՈՆՈՂՆԵՐ
(ИСКАТЕЛИ ЖЕМЧУГА)
ԲԻԶԷԻ յայտնի օպերան

Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ ընկերութեան գրասենեակում ժամի 9—2 առաւ. և 5—8 երեկոյեան, իսկ ներկայացման օրը թատրոնի կասսայում։
Ընկերութեան գրասենեակի հասցէն՝ Бебутовская ул. № 25.
(հ. ու.) առ. 1181. 3—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Երեկոյթների կարգը ձմեռային սեզոնի մէջ
Երեքշաբթի օրերը.—Հայոց ներկայացում։ Զինւորական երաժշտութիւն։ Սազանդար։ ՊԱՐԵՐ.
Չորեքշաբթի օրերը.—Սինեմատօգրաֆ։ Լոտօ։
Հինգշաբթի օրերը.—Ռուսաց ներկայացում կամ զինւորական երաժշտութիւն։ Լոտօ։
Շաբաթ օրերը.—Սազանդար։ Լոտօ։
Կիրակի օրերը.—Սինեմատօգրաֆ։ Զինւորական երաժշտութիւն։ Լոտօ։
Հիւրերը՝ ըստ յանձնարարութեան՝ մուտքի համար վճարում են. երեքշաբթի, հինգշաբթի, շաբաթ և կիրակի օրերը—տղամարդիկ 1 ր., կանայք 50 կ., ուսանողները 25 կ.։ Չորեքշաբթի օրերը—տղամարդիկ 50 կ., կանայք և ուսանողները 25-ական կոպ.։
Այն հիւրերը, որոնք ներկայացման տոմսակ ունեն վերցրած՝ կլուբ մտնելու համար վճարում են—տղամարդիկ 50 կ., կանայք և ուսանողները 25-ական կոպ.։
Ներկայացումների սկիզբը ժամը ճիշդ 8-ին երեկոյեան։
Սինեմատօգրաֆների սկիզբը ժամը 9-ին երեկոյեան։
(ե.) առ. 994. 0—10

ФАБРИКИ
А. ЭНФІАДЖІАНЦА
ПАПИРОСЫ
ИНТЕЛЛИГЕНТНЫЯ
ЦѢНА
25шт. 15к.
10ш. 6к. 100ш. 60к.

662. 100—77



առ.

ПАПИРОСЫ
ЭКСТРА
15шт.
6коп.
ФАБРИКИ
А. ЭНФІАДЖІАНЦА

(ե. հ. կ.)

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝
առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի։
Սրսկումներ նաև տուբերկուլինով։
Ընդունելութիւնը ամեն օր՝
առաւօտեան ժամը 9—11-ը և երեկոյեան ժամը 5—7-ը։
Католическая ул. д. № 10. Տելեֆոն № 792.
(ա.օ.) առ. 989. 100—57

ԲԺԻՇԿ
Գր. ՄԱԿԱՐԵԱՆ
Ներքին եւ երեխայոց
հիւանդութիւններ
Ընդունում է հիւանդներին իր նոր բնակարանում՝ Գանօվսկայա փողոց, տուն Սէլլանովների, № 18, տելեֆոն 615.
Առաւօտեան 12—1 ժամը
Երեկոյեան 5—6 ժամը
(հ.հ.կ.) առ. 819. 100—43

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԵՕՆՋԵԱՆ
Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին։ Պլոմբ, արհեստական ատամներ իւրաքանչիւրը 1 րուբլի, և այլն։
Աշակերտներին և ծառայողներին 50% զեղչ։
Ընդունելութիւնը առ. ժամը 9—2-ը և 4—7-ը երեկ.
Միքայէլեան փող. № 6, մուտքը պերէուլկայից։
(ե.հ.կ.) առ. 876. 50—42

ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԵԱՆ ԴԱՓՆԻՆԵՐԸ

III

— Քուէարկել, քուէարկել,—աղաղակում էր պատգամաւորական մեծամասնութիւնը։

Եւ քուէարկում էր։

Դա նրա իրաւունքն էր։

Եւ քուէարկութեամբ վճռում էր ամեն հարց՝ վարժեցրած զինուորների հլու հետևողութեամբ,

Սակայն ինչ էր քուէարկում։

Ճանաչել թէ չը ճանաչել այն չարագործութիւնները, որոնք տեղի են ունեցել մեծամասնականների ընտրութեան ժամանակ։

— Չը ճանաչել,—պատասխանում էր քուէարկող մեծամասնութիւնը։

Պրծաւ գնաց։

Պէտք է նկատել, որ այս անգամ համազգային համագումար ժողովը կառավարութիւնից արտօնութիւն էր ստացել ստուգելու իր կազմը և քննելու պատգամաւորների լիազօրութիւնները։

Եւ ահա այդ արտօնութեան գործադրելու ժամանակ հանդէս եկան տարօրինակ տեսարաններ։

Փոքրամասնականներից մի քանիսը լուրջ նկատողութիւններ արին Թիւրքահայ մի խումբ պատգամաւորների մասին, առաջ բերին վկայութիւններ, որ ընտրութիւնները կատարված են անկանոն կերպով, առարկեցին նշանակալի պատգամաւորների վերաբերութեամբ եղած փոփոխութեան մասին։

Բայց ո՞վ էր դատաւորը։

Ինքը ժողովը։ Մի ժողով, որի մեծամասնութիւնը ամենևին տրամադիր չէր արդարութեան ձայնը լսելու։

Մեծամասնութիւնը չէր ըմբռնում դատաւորի կոչումը։ Նա հօտային փոխզգացումով համակված՝ տրամադրվել էր վճռել հարցերը առանց խորանալու նրանց էութեան մէջ, առանց կշռելու եղած առարկութիւնների արժէքը։ Նա նոյնիսկ համբերութիւն չէր ցոյց տալիս լսելու հանդարտօրէն փոքրամասնականների զեկուցումը։

Դատաւորի իրաւունքները անցել էին մեծամասնութեան ձեռքը։

Դատաւորը բարկանում էր, աղմկում էր, խօսքից զրկում էր բողոքաւորներին։

Դատաւորը, մեծամասնութեան մտրակներով զինված, ներկայանում էր իբրև շահագրգռված կողմի արձագանք, ուստի ռազմական ինքնագոհութեամբ ոտնակոխ էր անում ամեն մի բողոք։

— Քուէարկել, քուէարկել,—աղաղակում էր նա։

Ի՞նչը կարող է սթափեցնել մարդկանց։ Ոչինչ։

Եւ ոչինչ չը սթափեցրեց նրանց։ Խլացել էին ականջները՝ լսելու համար։

Բողոքաւորներին մնում էր մի բան, կամ առանձին-առանձին և կամ միացած ձայներով բողոքներ յայտնել հետևեալ ատեաններին։

Եւ մի քանիսը վերապահեցին իրաւունք՝ տալու իրանց ուրոյն կարծիքները սինոդին, որ պէտք է երկրորդ դատաւորի դերը կատարէր։

Սակայն։ Սակայն այդտեղ պէտք է հանդէս գար մի տարօրինակութիւն, որը եզակի է նոյնպէս իր տեսակի մէջ։ Էջմիածնական նահապետական բարքեր. հոգեզմայլ հոմերոսեան դայլայլներ։

Ատեանի նախագահը պէտք է քննէր այն բողոքները, որոնց մի մասը վերաբերում էր իր արարքներին։

Այո, Թիւրքահայ պատգամաւորների մի մասի ընտրութիւնը, ըստ բողոքաւորների, արդիւնք էր սինոդի նախագահի ներգործական միջամտութեան և մասնակցութեան։ Եթէ սխալ էր բողոքը, պէտք է հերքվէր առանց այդ նախագահի ներկայութեան։ Եթէ իրաւացի էր, պէտք է արձանագրվէր նախագահի բացակայութեամբ։

Դրա փոխարէն տեղի ունեցաւ մի ձեւականութիւն, որը բարձր, բողոք քննող ատեանի առաքելութիւն կատարելու փոխարէն առիթ եղաւ յետագայ աւելի բարդ և պատասխանատու դէպքերին։

Մեծամասնութիւնը յաղթեց։

Այո, նա յաղթեց, բայց Պիւրոսեան յաղթութեամբ։

Նա յաղթեց մեքենայական, արհեստական արտօնքներով, կրելով ներքին բարոյական սարսափելի պարտութիւն։ Յաղթեց այնպիսի զոհերով, այնպիսի հոգեկան սակարկութիւններով, այնպիսի գաղափարական կորուստներով, որ տասն անգամ աւելի հաճելի պէտք է լինէր տեղատւութիւնը։

Մենք արձանագրում ենք մեծամասնականների այդ յաղթութիւնը՝ իբրև պատմական մի անջնջելի երևոյթ։

Դա յաղթութիւն էր ապագայ հրաշափառ երջանկութիւն աւետելու հայ ժողովրդին և տալու նրան արժանաւորագոյնին իբրև հովուապետ Էջմիածնի գահի վրա։

Մեզ՝ փոքրամասնականներիս համար պարզ էր, որ Մանկունու ձեռքին եղած ցուցակը ուրիշ տրամաբանութիւն չէր կարող ունենալ, քան այն, ինչ որ ունեցաւ։

Մենք աշխատեցինք բացատրել, ում որ պարտաւոր էինք, այն է՝ համազգային ժողովին, որ Մանկունու ցուցակը հայ ժողովրդի տենչերի արտայայտութիւնը չէ։ Մենք յոյս ունէինք, թէ ժողովի մէջ կարթնանայ հասարակական խղճի ձայնը և մարդիկ չեն խաղայ դարաւոր ժողովրդական իրաւունքի հետ։

Չեղաւ։

Մենք ամեն փորձ արինք, և համոզել ցանկացանք, և բացատրութիւններ տուինք, և բողոքներ ներկայացրինք, և վերջապէս մեր պատգամաւորական իրաւունքներից ձեռք վերցրինք—միայն թէ չը սպանվէր այն մանուկը, որ հարազատ մայրը զիջում էր Սողոմոն Իմաստունի դատի ժամանակ մի պայմանով, որ չը մեռնի մանուկը։

Մեծամասնականները դարձան կատարելապէս ինքնիշխան տէր դրութեան։

Եւ նրանք հիւսեցին պատմական պսակ իրանց համար։ Թող դափնիները դառնան յուշարար նրանց մեծագործութեան համար։

Սակայն մանուկ չը դիմացաւ։ Խորթ մէր ձեռքին նա անշնչացաւ։ Արդարութիւնը խեղդվեց։

Մեծամասնութեան դափնիներ։

Ա. Քալանթար

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

—o—

ԹԻՒՐՔԱՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԿԱՏԱՐԱԾ ԴԵՐԸ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Այս անգամ կաթողիկոսի ընտրութեան ժամանակ Կ. Պոլսի հայոց ազգային և կրօնական ժողովների որոշումները Օրմանեան սրբազանի մասին ճակատագրական նշանակութիւն ունեցան։

Որքան էլ ապօրինի և անարդար էին այդ որոշումները ըստ էութեան և սահմանադրական կարգի, այնու ամենայնիւ նրանց կատարած բացասական դերը ակներև էր ընտրական պայքարի առաջին մոմենտից։

Այդ ապօրինի որոշումներով բոլոր Թիւրքահայ պատգամաւորների վրա բարոյական պարտք էր դրված Մաղաքիա սրբազանին կաթողիկոսական թեկնածու չը ճանաչել և նրա անունը թեկնածուների ցանկից հանել իսպառ։

Թիֆլիս եկած պատգամաւորների հետ առաջին անգամ տեսակցելուց յետոյ արդէն պարզվեց, որ այդ յանձնարարականները (mandat) պիտի ճանաչվեն պարտաւորեցուցիչ Թիւրքահայ պատգամաւորների համար։

Դրանից յետոյ մեզ համար հասկանալի եղաւ, որ Թիւրքահայոց ազգային ժողովը Օրմանեան սրբազանի ամբաստանութեան գործը գրեթէ 3 տարի իր մօտ պահելով՝ նպատակ ունէր նրանից օգտվել կաթողիկոսական ընտրութիւնների ժամանակ Օրմանեանի թեկնածութիւնը տապալելու համար։

Եւ իրօք, դեռ մի քանի ամիս առաջ լսվում էին Կ. Պոլսից ձայներ, որ այդ գործը պիտի անշարժ պահեն մինչև նորընտիր հայրապետի հաստատութիւնը....

Ռուսահայերս, որոնք այնքան փափագում էինք շինծու ամբաստանութեան կոշմարը պարզելով Օրմանեան սրբազանի թեկնածութիւնը հանգիստ խղճով պաշտպանելու, Թիֆլիսից անցեալ գարնան դիմեցինք ազգային ժողովին, խնդրելով փութացնել այդ գործի վերջնական վճիռը. սակայն մեր դիմումը որևէ հետևանք չունեցաւ. այնտեղ արդէն նախօրօք որոշված էր մինչև կաթողիկոսի ընտրութիւնը ընթացք չը տալ գործին։

Վարագոյրը ռուսահայերիս առաջ վերջնականապէս բացին մեր ազգայինները, երբ եկան Էջմիածին պատգամաւորական պաշտօնով և որոշ յանձնարարականով՝ ստացված Կ. Պոլսի ազգային և եկեղեցականների «համագումար» ժողովների կողմից։

Բայց ինչ էին ներկայացնում այդ որոշումները ըստ իրանց ներքին որակի։

Որոշման օրը ազգային ժողովի նիստին ներկայ էին 73 երեսփոխաններ։ Օրմանեանի դէմ ուղղած բանաձեը առաջարկեցին Միհրդատ Հայկազն, Վռամեան և Եամէրեան, որոշ խմբակցութեան պատկանող երեսփոխաններ։ Այդ բանաձեը անցաւ 27 ձայնով, որ և ընդունվեց՝ իբրև mandat ազգային ժողովի կողմից բոլոր Թիւրքահայ պատգամաւորների համար։

Իսկ եկեղեցականների «համագումար» անուանված ժողովը, մասնակցութեամբ 27 եկեղեցականների, «գիտելով որ կանոնաց թեմեր իրենց պատուիրակներուն պաշտօն յանձնած են Օրմանեան սրբազանի կաթողիկոսական թեկնածութեան քուէ տալ», քննութեան առնելով Օրմանեանի դէմ հարուցված զրպարտութեան նիւթը, որոշում է դիմել համազգային պատգամաւորական ժողովին և առաջարկել իսպառ մերժել Մաղաքիա արքեպիսկոպոսի թեկնածութիւնը. այդ իր տեսակի «նշանաւոր» որոշման տակ ստորագրում են 12 քահանայ և 2 վարդապետ. վերջինները Օրմանեանի երդուեալ թշնամի Պալաքեան և Օտապաշեան վարդապետներն են. եկեղեցական տարեգրութեան մէջ մի չը լսված և չը տեսնված դատական որոշումն ստորագրված ստորադրեալ կրօնաւորների ձեռքով՝ և ուղղված արքեպիսկոպոսական աստիճան ունեցող և պատրիարքական բարձր պաշտօն վարած եկեղեցականի դէմ։

Որքան ապօրինի և անարդար են այդ որոշումները, եթէ յիշենք, որ ազգային ժողովի նշանակած քննիչ յանձնաժողովը, քննելով իր ժամանակին ամբաստանութեան գործը, մի առ մի հերքել էր նրա մէջ պարունակված մեղադրանքները։

Արդ՝ պարզ և հասկանալի է, որ Կ. Պոլսի և այստեղի որոշ շրջանների կողմից սարքված դաւադրութիւնը Օրմանեանի դէմ՝ ունէր մի նպատակ՝ ինչ գնով էլ որ լինի տապալել նրա թեկնածութիւնը կաթողիկոսական ընտրութիւնների ժամանակ։

Այժմ հայ հասարակութեան լայն գիտակից շրջանները ճանաչեցին այդ դաւադիր ույժերն իրանց կատարեալ և անպաճոյճ մերկութեամբ։

Այո, ցաւելով պէտք է խոստովանել, որ Թիւրքահայ պատգամաւորների խոշոր մասը Էջմիածին բերին հայկական թայֆայի տրամադրութիւնն ու պահանջը և ոչ թէ ժողովրդի ձայնը, որի անուան տակ նրանք շարունակ աշխատում էին պատսպարվել։

Ազգային ժողովի չնչին և գունաւոր փոքրամասնութեան որոշումը նրանք առանց վարանելու ընդունեցին՝ իբրև ժողովրդից ստացված պատգամ՝ տապալելու Օրմանեանի թեկնածութիւնը, առանց նկատի առնելու որ Էջմիածնի հնադարեան տաճարում նրանք խաչի և Աւետարանի վրա պիտի արտասանեն երդմնագրի արտաշարժ և խորիմաստ խօսքերը....

Տարրական քաղաքավարութեան և փափկանկատութեան պահանջն անգամ չլացան կատարել մեր Թիւրքահայ եղբայրները, մերժելով ռուսահայերիս արդարացի և օրինաւոր առաջարկը՝ մտցնել Օրմանեանի անունը քառանուն ցանկի մէջ։

Մեր խումբը, որ ունէր առնուազն 32 ձայն և ընդգրկում էր Ռուսաստանի 4 հայաշատ թեմերի և Թիւրքիայի մի քանի թեմերի միլիոնից աւելի հայ ազգաբնակութեան պատկառելի թիւը, նաև հայոց եկեղեցու արքեպիսկոպոսների, եպիսկոպոսների, վարդապետների և աշխարհական ներկայացուցիչների անունները, պիտի ներշնչէր մեր հակառակորդներին tolérant լինելու անհրաժեշտութիւնը։

Եթէ Թիւրքահայերը արդարութեամբ և օրէնքով ղեկավարվէին, նրանք քառանուն ցանկի մէջ մի տեղ պիտի շնորհէին և մեր միակ թեկնածուին, որին յետոյ կարող էին իրանց քուէների ստուար մեծամասնութեամբ չընդունել վերջնական երկանուն ցանկի մէջ։

Դրանով Թիւրքահայ պատգամաւորները բարոյապէս բաւարարութիւն տուած կը լինէին ռուսահայերիս, որոնց եղբայրական զգացմունքների արտայայտութիւնը նրանք մինչև այսօր շատ անգամ վայելելու դէպքեր ունեցել են։

Այս փափկանկատ պարագաներում Թիւրքահայերը պիտի հասկանային, որ մերժելով ռուսահայերիս արդարացի պահանջը՝ նրանք զգալի հարուած են տալիս հայութեան երկու հատուածների միջև հաստատված եղբայրական զգացմունքներին։

Սակայն նրանք կատարելապէս անընդունակ հանդիսացան ըմբռնելու այն տարրական ճշմարտութիւնը, որ իրանց բռնած յոռի ընթացքը պիտի վիրաւորէ ռուսահայերիս և սառնութիւն մտցնէ մեր փոխադարձ զգացմունքների մէջ, որ ամենայն հայոց հայրապետը, ապրելով և գործելով մեր երկրում, ռուսահայերիս հետ կապված է աւելի սերտ եւ կենդանի կապերով, ուրեմն և Էջմիածնի հայրապետի ընտրութեան գործում Թիւրքահայ պատգամաւորները գոնէ պիտի քաշվէին ոտնակոխ անելու ռուսահայ ժողովրդի մեծամասնութեան ձայնը։

Բայց, աւաղ, կիրքը և թշնամութեան զգացմունքը կուրացրել էր Էջմիածնում հիւրընկալված Թիւրքահայերին և խեղդել նրանց մէջ առողջ բանականութիւնը, ի բաց առեալ անհատական անուններ, որոնք յարգելով ռուսահայերիս իրաւունքը՝ չուզեցին մաս ունենալ կատարված խայտառակութեան մէջ։

Մեզ զարմացնում էր Թիւրքահայերի մէջ պատասխանատւութեան զգացմունքի կատարեալ բացակայութիւնը։ Նրանք ոչ կամենում էին մտածել սպառնացող պառակտման մասին, որ կարող է իրարից բաժանել հայ եղբայրներին, ոչ էլ երկիւղ էին կրում այն ծանր հետևանքներից, որոնք պիտի վճռապէս խորտակեն մեր փոխադարձ յոյսերը և ակնկալութիւնները։

Ժողովրդի անունից խօսողները նրա սիրտը և հոգեբանութիւնը հասկանալու անընդունակ հանդիսանալով հանդերձ՝ նոյն հայ ժողովրդի պառակտման և բաժանման պատճառ եղան, և ով գիտէ երբ կը լցվի այն խոր վիհը, որ Էջմիածնի դեկտեմբերեան օրերից յետոյ գոյացաւ երկու սահմանակից եղբայրութեան միջև։

Յամենայն դէպս չը տայ Աստուած, որ որևէ ժամանակ կրկնվեն հայերիս մէջ այն դաժան եւ սեւ օրերը, որոնք Էջմիածնի տարեգրութեան մէջ պիտի յաւէտ արձանագրվեն՝ իբրև մեր թշուառ իրականութեան սոսկալի ուրուականն...։

Մի Թիւրքահայ աշխարհական պատգամաւորի անկեղծ և սրտաբուղխ խոստովանութիւնը շատ յուզեց սիրտս։

Ընտրական ճգնաժամի վերջին բոպէին, նստած՝ իր ընկերների հետ Էջմիածնի Մայր տաճարում, երբ իւրաքանչիւր պատգամաւոր խղճի մտօք պիտի իր ձայնը տար արժանաւորագոյնին, նա իր տանջված սրտից կարողացաւ միայն արտադրել հետևեալ սրտաշարժ տողերը առանձին տոմսի վրա գրած, որ և դրեց Դուրեան եպիսկոպոսի տուփի մէջ.

«Օրէնքի պաշտպան պ. պրոկուրօրին։ Վերջին պահուն խղճիս տանջանքէն ազատելու համար, կը յայտարարեմ, թէ այս ընտրութիւնն եղաւ ճնշումով և էնթրիգով և պատգամաւորներէն շատերը այս համոզումն ունին, մանաւանդ տաճկաստանցինները, թէև ստիպուած են լռել»։

Այդ անկեղծ խոստովանութիւնը բոցավառ կայծի պէս բոցէապէս փայլեց և լուսաւորեց Էջմիածնի թշնամութեամբ լցված մթնոլորտը այն սև ընտրական օրերին։

Յուզված սրտով համբուրում եմ այդ պատգամաւորի պայծառ ճակատը։

Յ. Սպէնդիար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

17 և 18 դեկտեմբերի

Ցարսկոէ-Սէլօ.—Երեկոյեան ժամը 6-ին Կայսերական պավիլիօն եկան հարաւից Կայսրը և Կայսրուհին Օգոստափառ Զաւակներով։ Գնացքի գալուց առաջ Ցարսկոէ-Սէլօ եկան Կայսրուհի Մարիա Թէոդորովնան Օգոստափառ Աղջիկներ Կսենիա և Օլգա Ալէքսանդրովնաների հետ և պրինց Պետր Օլդէնբուրգսկին։ Կայսրուհի Մարիա Թէոդորովնան Օգոստափառ Աղջիկների հետ մտաւ Ալէքսանդրեան պալատը, պրինց Օլդէնբուրգսկին Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաեվիչի հետ միացին կայարանում Նորին Մեծութիւններին հանդիպելու համար։ Կայարանում ժողովվեցին ստատս-սեկրետար Կոկօվցեվը, ներքին գործերի մինիստրը, Պետերբուրգի նահանգապետը, գեներալ-ադիւտանտ Գրինվալդ, պալատական բարձր պաշտօնեաներ, շքախմբի անձեր և այլ պալատականներ։ Գնացքը հասնելուց յետոյ Նորին Մեծութիւնները բարևեցին Օգոստափառ ազգականներին և անցան ներկայ գտնվողների առջևից։

Պավիլիօնից Նորին Մեծութիւնները մեկնեցին Ալէքսանդրեան պալատը, ուր դիմաւորվեցին Կայսրուհի Մարիա Թէոդորովնայից և Օգոստափառ Աղջիկներից։ Նորին Մեծութիւնների հետ եկան պալատի մինիստրը և այլ պաշտօնեաներ։

Պետերբուրգ.—Նորին Մեծութիւններ Թագաւոր Կայսրը և Կայսրուհի Թագուհի Ալէքսանդրա Թէոդորովնան, Գահաժառանգ Արքայազն Մեծ Իշխան Ալէքսէյ Նիկոլայևիչի և Օգոստափառ Աղջիկների հետ դեկտեմբերի 18-ին բարեհաճեցին վերադառնալ Ղրիմի հարաւային ափից Ցարսկոէ Սէլօ։

Բերլին.—Գիշերային ապաստարանում թունաւորվածների թիւը հասաւ 132 մարդու, որոնցից 60-ը մեռան։ Կայսրը զեկուցում պահանջեց ներքին գործերի մինիստրից։

Բերլին.—Երեկոյեան դէմ ոստիկանութեանը յայտնեցին, որ թունաւորվել են 141 մարդ, մեռել 70։ Առաջին անգամ ենթադրվեց թէ ըստ երևոյթին թունաւորվել են ձկան թոյնով, յետոյ պարզվեց այլ պատճառ։ Բոլոր գիշերողներին առաջարկված է ոչնչացնել մի օղեգործարանում պատրաստված օղին։

Վիեննա.—Սուրբ Մարկոսի գերեզմանատանը գտնվեց լրագրական թղթի մէջ փաթաթված մարդու գանգ ստորին ծնօտի պակասութեամբ։ Գտնված գանգը պատկանում է Կարագէորգէվիչին, որովհետև գանգի գտնված մասը նման է գերեզմանոցում թողնված ներքին ծնօտին։

Պարիզ.—Պալատն ընդունեց 1912 թվի բիւջէն։ Պալատը և սենատը ընդունեցին բիւջէի $^1/_{12}$ բաժնի օրինագիծը։ Պարլամենտական նստաշրջանը փակվեց։

Կալկաթա.—Առաւօտը եկաւ անգլիական թագաւորական զոյգը։

Վիեննա.—Աւստրիական պատգամաւոր. ժողով Կրամարժը իր ճառում շօշափում է այսպէս կոչված ռուսական լրտեսութեան հարցը, որ գոյութիւն ունի Գալիցիայում, խորհուրդ տալով վերջ դնել այդ լրտեսութեան, որի գլխաւոր տեղը, լուրերի համաձայն, գեներալ շտաբն է։ Ռուսաստանում ազգային զգացմունքը հաւասարապէս յարգում է բոլոր ազգութիւններին և նրանց ազատ զարգացումը, մինչդեռ Աւստրիայում հալածվում է ուղղափառութիւնը։

Կղերական Կօրօլէցը մատնանիշ է անում Իտալիայի հետ գոյութիւն ունեցող աննորմալ յարաբերութիւնների վրա, ցաւում է Գէտցէնդորֆի բացակայութեան առիթով, մեղադրում է արտաքին գործերի մինիստրութեանը դէպի ալբանական հարցը ցոյց տուած անուշադիր վերաբերմունքի մէջ։

Ֆուկսը քրիստոնեայ սօցիալիստների անունից յայտնում է, որ նրանք ձայն են տալիս յօգուտ բիւջէի ոչ առ Էրենտալը տածած վստահութիւնից. Աւստրիայի ու Իտալիայի և Աւստրիայի ու Գերմանիայի միջև գոյութիւն ունեն թիւրիմացութիւններ, որոնց հարկաւոր է վերացնել. սպասում էին բացատրութիւններ Էրենտալից, սակայն նա չը տուեց այդ բացատրութիւնները։

Վիեննա.—«Կոր. Բիւրօն» հաղորդում է, որ կայսրը բոլորովին առողջացաւ տկարութիւնից։

Մադրիդ.—Ֆրանսիական դեսպանը արտաքին գործերի մինիստրի հետ զրուցեց ներկայութեամբ անգլիական դեսպանի և յանձնեց ֆրանսիական կառավարութեան պատասխանը սպանական հակառաջարկութեան նկատմամբ։

Պարլամենտը կը գումարվի յունվարի 5-ին։

Մալտա.—Բրիտանական «Սիֆօլկ» նաւին հրամայվեց անմիջապէս գնալ Եգիպտոս կնքած ծրարով։

Րէյտէրի տեղեկութիւնների համաձայն, բրիտանական կառավարութիւնը ռազմանաւ է ուղարկում Եգիպտոսի չէզոքութիւնը պաշտպանելու համար։

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

17 և 18դեկտեմբերի

Կ. Պօլիս.—Օպպօզիցիան բացակայում է պալատում. կվօրումը չը կայ։ Մեծ-վեզիրը յայտարարում է, թէ օբստրուկցիայի պատճառով կաբինէտը հրաժարական է տալիս։

Կ. Պօլիս.—Պալատ։ Հերթական քննութեան առարկայ է սահմանադրութեան 35-րդ յօդուածի ուղղումը, որը սուլթանին իրաւունք է տալիս արձակել պալատը առանց սենատի համաձայնութեան։ Ընդդիմադիրները բացակայում են։ Նախագահը դիտողութիւն է անում կվօրումի բացակայութեան նկատմամբ։ Այնուամենայնիւ մեծ-վեզիրը բացատրում է ուղղումը ընդունելու անհրաժեշտութիւնը, մեղադրում է ընդդիմադիրներին նրանում, որ նրանք ուզում են օբստրուկցիա կազմակերպել, յայտնում է, որ մինիստրները կերթան խորհրդակցելու և ապա արդիւնքը կը յայտարարեն։ Նիստը ընդհատվում է։ Մինիստրները մի ժամից յետոյ վերադառնում են պալատ, ուր դեռ ևս կվօրումը բացակայ է։ Մեծ-վեզիրը յայտնում է, որ ի նկատի ունենալով կուսակցութեան կազմալուծումը, կաբինէտը հրաժարական է տալիս։ Պալատի նիստից յետոյ կայացաւ ընդդիմադիրների ժողովը, երբ որոշվեց կոչ հրատարակել մեծ-վեզիրի մեղադրանքների դէմ և յայտարարել, որ կուսակցութիւնների միջև համաձայնութիւն կայացնելու խնդիրը անյաջողութեան հանդիպեց, որովհետև կառավարութիւնը ուզում է պալատն արձակել։ Կոչը ամբողջ պատասխանատւութիւնը գցում է մեծ վեզիրի և կառավարական կուսակցութեան վրա։ Սուլթանը ընդունեց Սայիդ-փաշայի հրաժարականը, որը պատճառաբանվում է երկիրը կառավարելու անհնարելիութեամբ, ի նկատի ունենալով պալատի հետ ունեցած միջադէպը։ Հաւանական է համարվում Սայիդ-փաշայի ձեռքով նոր կաբինէտի կազմակերպումը։ Սուլթանը կը խորհրդակցէ սենատի և պալատի նախագահների հետ։ Ոստիկանական կազմը փողոցներում ուժեղացված է։

Կ. Պօլիս.—Նոր կաբինէտ կազմելու գործը յանձնվեց Սաիդ-փաշային։

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. գործ.)

17 դեկտեմբերի

Շանխայ.—Խաղաղ կոնֆերենցիան որոշեց, որ ազգային ժողովի զբաղմունքների ժամանակ, արտասահմանեան փոխառութիւններ չեն կարող կնքվել. կայսերական զօրքերը 17 մղոն պէտք է յետ քաշվեն ներկայումս կենտրոնական նահանգներում գրաւած դիրքերից. հանրապետական զօրքերը չը պէտք է նոր դիրքեր գրաւեն։

Տօկիօ.—Կիսապաշտօնական Եամատօն ասում է, որ Եապօնիան պէտք է օգտվէ գլխաւորապէս Անգլիայի դաշնակցութիւնից Չինաստանի վրա ազդելու՝ կարգ ու կանոնը վերականգնելու նպատակով։

Խարբին.—Ուրգում դեկտ. 15-ին Խուտուխտան ստանձնել է Մոնգոլիայի կառավարութիւնը իբրև ինքնակալ կայսր։ Ներկայ են եղել մոնգոլ հոգևորականութիւնը և ահագին ժողովուրդը։

Խարբին.—Ռուբէյի փոխարքան հաղորդեց հիւպատոսներին, որ հրաման է ստացվել անմիջապէս յետ տանելու կառավարական զօրքերը 100 մղոն Խայլարից դէպի հիւսիս և յայտարարել վերջինիս չէզոք։

Վաշինգտօն.—Պետական դեպարտամենտի պաշտօնեաները հաղորդում են, որ ամերիկական կառավարութիւնը չի ճանաչի չինական հասարակապետութիւնը, քանի միապետականները կարող կը լինեն կռիւը շարունակել։ Սակայն այդ չէ արգելում Միացեալ-Պետութիւնների ներկայացուցիչներին բանակցութիւն սկսել ժամանակաւոր հանրապետութեան հետ՝ ամերիկական շահերը պաշտպանելու և կարգ ու կանոնը վերականգնելու համար։

18 դեկտեմբերի

Խանկօու.—Զինադադարը վերջացաւ։ Հանրապետականները սկսեցին հրացանազարկ անել Խանյանը։

Մուկդէն.—Մանջուրական նահանգների պատգամաւորը հեռագրում է, որ Շանխայի կոնֆերենցիան աւարտեց իր պարապմունքները, խօսելով յօգուտ հանրապետութեան։ Պատգամաւորները կը մնան Նանկինում հանրապետութեան նախագահի պաշտօնին ընտրելի որոշելու։ Հասարակական ապահովութեան Մուկդէնի կոմիտէտը փակվեց անգործ լինելու պատճառով։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

17 և 18 դեկտեմբերի

Ջուլֆա.—Հեռագիրը Թաւրիզի հետ գործում է։

Դեկտ. 14-ին այստեղից մեկնած զօրամասը հասել է Թաւրիզ։ Զօրամասերի շարժմանը մեծ օգնութիւն ցոյց են տալիս Թաւրիզի ճանապարհի աւտոմօբիլները, որոնք շարունակ փոխադրում են զինուորներին ու ապրանք։

Ջուլֆա.—Եկաւ անթել հեռախօսով գործող վաշտը և սկսեց անթել հեռագիր անցկացնել Պարսկաստանի հետ։

Թաւրիզ.—Գեներալ-հիւպատոսը շուկայի փողոցներում յայտարարութիւն կպցնել տուեց, որով բնակիչները հրաւիրվում են բանալ շուկաները և դիմել խաղաղ զբաղմունքներին։ Կարգ ու կանոնը շուկաներում կը պահպանեն մեր զօրքերը։ Զէնքերը աստիճանաբար յանձնվում են ռուսաց իշխանութիւններին։

Դեկտեմբերի 15-ին ու 16-ին գտնվեցին երեք ռուս զինուորների այլանդակված ու յօշոտված դիակներ։ Տներում գտնվում են մեր զինուորների կիզած դիակների մնացորդները։ Գեներալ-նահանգապետի տանը գետնից հանեցին մի զինուորի դիակ, որին հաւանօրէն թաղել էին ողջ-ողջ, որովհետև մարմնի վրա վէրքեր կամ խեղդամահ անելու հետքեր չը կան։ Ընդամենը Թաւրիզի զօրամասի գերեզմանատունն են բերվել քաղաքի զանազան տեղերից ինն զինուորի դիակներ, որոնցից երեքը հանվել են ոստիկանատան բակի ջրհորից, ոչ հեռու գեներալ-նահանգապետի տնից։

Եկան վեցերորդ և ութերորդ կովկասեան հրացանաձիգ գնդերը 2 թնդանօթաձիգ վաշտ, նաև զօրամասի նոր նշանակված հրամանատար գեներալ-մայոր Վօրոպանօվը իր շտաբի հետ։

Փառաւոր կերպով կայացաւ 12 զինուորի, կօզակի և օֆիցէր իշխան Վախվախօվի թաղումը։ Ներկայ էին զօրամասի հրամանատարը շտաբի հետ, ռուսաց գեներալ-հիւպատոսը հիւպատոսարանի պաշտօնեաների հետ։ Քահանայ Դատաձէն դամբանական խօսեց։

Լօնդօն.—Րէյտէրի գործակալութիւնը տալիս է Թէհրանից ստացված հետևեալ հեռագիրը. «Թաւրիզում պաշտօնավարող անգլիական հիւպատոսը հաղորդում է, թէ փոխ-նահանգապետը ապաստանեց բրիտանական հիւպատոսարանում։ Ճակատամարտը վերջացաւ։ Հիւպատոսը վկայում է, որ նրան յայտնի չեն փաստեր, որոնք հաստատէին այն մեղադրանքները, թէ ռուսները պարսիկների հետ վարվում են խստութեամբ ու գազանութեամբ»։

Ուրմիա.—Սալմաստից հաղորդում են, որ քիւրդերը նոր յարձակում են գործել Ղուշչիի գիւղի վրա։ Շիկակները գրաւելով Խանակսարի գիւղը, դրամներ են շորթում Ջուլֆայից Ուրմիա եկող կարաւաններից։ Ռուսաց կարաւաններից առնված է խոշոր գումար։

Թիւրքաց հիւպատոսը իր պահակախմբի կազմը ուժեղացրեց։ Ներկայումս ամբողջ պահակախումբը բաղկացած է 80 ասկէրներից։ Սօվուջ-Բուլաղից հաղորդում են, որ Ղազի-Ալին ֆանատիկ պանիսլամական ճառով հրաւիրում էր ազգաբնակութեանը՝ խնդրել հովանաւորութիւն Թիւրքաց կառավարութիւնից և պատրաստ լինել զէնքը ձեռին հանդիպել ռուսներին։ Այդ ճառի հետևանքն այն եղաւ, որ Թիւրքաց հիւպատոսարան եկան զանազան դասակարգերի ներկայացուցիչներ խնդրելու իրանց Թիւրքահպատակ ընդունել։ Հիւպատոսը խոստացաւ հեռագրել Կ. Պօլիս և ջանալ կատարել տալու խնդիրը։

Ամեն հաղորդակցութիւն Սօվուջ-Բուլաղի և Միանդաբի միջև խզված է։ (Մինչև Ջուլֆա պօստով)։ Կայսրի անուանակոչութեան օրը մահմէդական հոգևորականութեան մի քանի ներկայացուցիչներ ռուսաց հիւպատոսին յայտնեցին՝ թէ իրանք գոհ են ռուսներից և ասացին, որ նրանք որոշել են Աշուրի սգի օրը, երբ մզկիթները կը լինեն աղօթողներով, մաղթանք կատարել ռուսաց Ցարի արևշատութեան համար։

Թէհրան.—Պատգամաւորների նոր ընտրութիւնները այստեղ նշանակված են դեկտեմբերի 21-ին։

Ոստիկանութիւնը փակեց Սէադէր դէմօկրատական ակումբը։ Քաղաքում լիակատար կարգ ու կանոն է։

Բուշիր.—Անգլիական «Ֆօկս» ռազմանաւը ափ իջեցրեց հնդիկ գնդին։ Անգլիացիները Կազրունի մօտերը բրիտանական հիւպատոսի վրա գործված յարձակման ժամանակ կորցրին հինգ սպանված և 10 վիրաւոր։ Յարձակվողները զինված էին նորագոյն հրացաններով։

(Լրագիրներից)

Ռուսաց արտաքին գործերի մինիստրութիւնից ստացված տեղեկութիւնների համեմատ, դրութիւնը Թաւրիզում շարունակվում է չափազանց անորոշ լինել և միևնոյն ժամանակ շատ լուրջ։ Հեռագրաթելի փչանալու պատճառով շատ պակասաւոր և ուշացած տեղեկութիւններ են ստացվում։ Զինւորական զօրաբաժնի հաղորդակցութիւնը ռուսական հիւպատոսութեան հետ դեռևս ընդհատված է և հազիւ թէ վերականգնվի մինչև օժանդակ զօրքերի գալը։ Շուտով Թաւրիզ կը մտնի Կովկասից ուղարկված և շտապով գնացող հրացանաձիգ մի գունդ։ Դրա գալուց յետոյ խիստ կը փոխվի դրութիւնը։ Հրամանագրված է ամեն միջոցներ գործ դնել՝ կարգը վերահաստատելու և յանցաւորներին օրինակելի կերպով պատժելու համար։ Արտաքին գործերի մինիստրութիւնը ճիշդ թւանշաններ չունի մեր կորուստների մասին, բայց մինիստրութեան մէջ կարծում են, որ երեք օր շարունակվող կատաղի կռւի մէջ ռուսաց զօրաբաժինը կորցրեց իր ուժերի նշանաւոր քանակութիւնը։ Կորուստի մեծութիւնը կարելի է բացատրել և այն հանգամանքով, որ ռուսական զօրքերը լաւ ծանօթ չեն Թաւրիզի տեղագրութեան հետ։ Ռուսները ստիպված էին լինում կռիւ մղել այնպիսի մարդկանց դէմ, որոնք լաւ ծանօթ են ամեն ծակուծուկերի հետ։ Այնտեղից վերջերս ստացված տեղեկութիւններից երևում է, որ Թաւրիզը կտրված է Թէհրանից, Այդպիսով, Թէհրանի կառավարութեան կարգադրութիւնները Թաւրիզում տեղի ունեցած դէպքերի մասին իրանց նպատակին չեն հասնում։

Ռուսաց արտաքին գործերի մինիստրութիւնն այցելեց Պարսկաստանի գործերին վերաբերեալ լիազօր Մահմէդ-Ալի-Գօլի-խանը, որը երկարատև խօսակցութիւն ունէր մինիստրութեան պարսկական գործերին վերաբերեալ բաժնի կառավարչի հետ։ Խօսակցութիւնը վերաբերում էր Թաւրիզում տեղի ունեցած դէպքերին, և Մահմէդ-Ալի-Գօլի-խանը հաղորդեց ռուսաց կառավարութեան ներկայացուցչին Թաւրիզից նրա ստացած հաւաստիացումը, որ Թէհրանի կառավարութիւնը ոչինչ մասն չունի Թաւրիզում տեղի ունեցած դէպքերին և ամեն միջոցներ ձեռք է առնում դադարեցնելու անկարգութիւնները և որոշելու մեղաւորներին ու ցաւակցութիւն է յայտնում բոլոր պատահածի մասին։ («Р. В.»)

Ռուսական Թաւրիզի զօրաբաժնի հրամանատար գնդապետ Զապլինի առաջին զեկուցման հիման վրա «Новое Время» լրագիրը հաղորդում է. «Կռիւը մեր զօրքերի դէմ սկսվեց դեկտեմբերի 7-ին։ Պարսիկները կտրեցին այն հեռախօսաթելը, որ միացնում էր մեր զօրաբաժինը ռուս-պարսկական բանկի և ռուս այլ հիմնարկութիւնների հետ։ Հրաման արձակվեց անյապաղ ուղղել թելը։ Երբ մեր զինուորները ձեռք զարկին աշխատանքի, պարսիկները սկսեցին գնդակահարել նրանց։ Պարսիկների այդ գործողութիւնները բոլորովին անսպասելի էին և բոլոր ռուսների վրա շշմեցնող տպաւորութիւն գործեցին։ Մեր զօրաբաժնից ուղարկվեց մի օֆիցէր տասը հրացանաձիգներով։ Օֆիցէրը հրաման արձակեց գնդակահարել պարսիկ ոստիկաններին, այնպէս որ նրանցից երկուսը սպանվեցին տեղնուտեղը։ Ի նկատի ունենալով պարսիկների յոխորտալի գործողութիւնները և նրանց յանդգնութիւնները ռուսների հասցէին՝ երկրորդ անգամ հրաման արձակվեց դեկտեմբերի 11-ին զինաթափ անել փողոցում գտնվող պարսիկներին և մեր զօրքերով գրաւել ոստիկանական վարչութիւնը։ Մեր զօրքերի վրա կրկնվում են սակայն յարձակումները։ Իսկ պարսիկները գնդակահարում էին զանազան տեղերից։ Ապա գիշերապահ զօրախումբը, համաձայն ստացված հրամանների, հեռացաւ դէպի իր զօրամասը։ Պարսիկները շարունակում էին գնդակահարել մեր զինուորներին։ Փողոցներում տեղի էին ունենում տեսարաններ, որոնցից երևում էր, որ վճռված է ինչ էլ լինի առիթ գտնել արիւնահեղ ընդհարումների համար։ Ապա պարսիկների շարունակվող գործողութիւնները ստիպեցին գնդապետ Զապլինին հրաման արձակել ռմբակոծելու միջնաբերդը և քաղաքը։ Առաւօտվանից արդէն ընդհատված էր տելէֆօնի հաղորդակցութիւնը ռուս-պարսկական բանկի և հիւպատոսարանի հետ։ Շուտով գնդապետ Զապլին իմացաւ, որ ընդհատվել է հեռախօսային հաղորդակցութիւնը Թաւրիզի և Ջուլֆայի, նոյնպէս և Բաղէ-շէմալի և մենգրէլցիների միջև։ Վերջինները գտնվում էին քարվանսարայում։ Փողոցների ռմբակոծութիւնից յետոյ, զօրաբաժինը, բաղկացած՝ մի վաշտից երկու թնդանօթով և երկու ռմբաձիգով, ցերեկվայ ժամը 2-ին հասաւ մենգրէլցիներին, որոնք գտնվում էին ոստիկանութեան վարչութեան տան մէջ, ենթարկված ամեն կողմից յարձակման. այդ զօրաբաժինը մեծ ջանքով և կորուստներով հասաւ իւրայիններին։ Երեկոյեան ժամը 5-ին մենգրէլցիները և լաբինցիները, նոյնպէս և ուղարկված ռուս զօրաբաժինը անցան դէպի Բաղէ-շէմալ հակերով և ռազմամթերքներով։ Ամբողջ օրը ռուս զօրաբաժինը տեղեկութիւններ չունէր ոչ հիւպատոսարանից, ոչ էլ ռուս-պարսկական բանկից։ Գնդապետ Զապլինի խօսքով, պարսիկները գործում էին քաջաբար։ Նրանք ամբողջ ժամանակը գնդակահարում էին մեր զինուորներին, և կրակում էին տան պատուհաններից։ Ապա զօրաբաժնի հրամանատարը իր զեկուցման մէջ նկատում է, որ սպանվածների և վիրաւորների թիւը մեր կողմից նշանաւոր է, թէպէտ և չէ ասում ճիշդ թւանշանը»։

Առևտրական դասակարգը Աստարայում՝ ուղարկել է, «Нов. Вр.» լրագրի տեղեկութիւնների համեմատ, հետևեալ հեռագիրը մինիստրների խորհրդի նախագահին, արտաքին գործերի մինիստրին և առևտրի ու արդիւնաբերութեան մինիստրին։ «Էնզէլի նաւահանգստում ռուս ապրանքների դէմ առաջուց սկսված բոյկոտը շարունակվում և սաստկանում է։ Ամբողջ շուկան փակված է։ Պահեստները փակված են ապրանքներով, որոնք ուղարկվելու են Պարսկաստանի խորքը և Ռուսաստան։ Շոգենաւերը կանգնած են առանց դատարկվելու ապրանք դատարկողների պակասութեան և պահեստներում տեղեր չունենալու պատճառով։ Ռուսական առևտրի կատարեալ խորտակումն է։ Տեղական առևտրականութիւնը դիմում է ամենահպատակ խնդրով՝ օգնել նրան և թոյլ չը տալ կատարեալ սնանկութիւնը։ Լսվում են պարսիկների սպառնալիքները ռուսահպատակների հասցէին, իսկ այստեղի ռուսական զինուորական զօրաբաժինը անբաւարար է մեզ պաշտպանելու համար, եթէ սպառնալիքները իրագործվեն»։

«Berl. Tag.» լրագիրը գրում է պարսկա-ռուսական ուլտիմատումի առիթով Պարսկաստանին հետեւեալը. «Պարսկաստանի վիճակը որոշված է. նա ոչ թէ իրապէս, այլ և իրաւաբանօրէն դադարեց անկախ պետութիւն մնալ»:

Թէհրանից Մոսկվա հաղորդում են. «Քաղաքում հանգստութիւն է տիրում: Ազգաբնակութիւնը անտարբերութեամբ ընդունեց ռուսական ուլտիմատումը: Ցուցվում են միայն ֆէդայիները և դեմոկրատները, որոնք փորձում էին ժողովրդական միտինգ սարքել: Սակայն Եփրեմը գիշերապահ զինւորներով լցրեց փողոցները, և կարգը չը խախտվեց: Ռամկավարականների միջև տեղի ունեն ձերբակալութիւններ. մօտենում է դեմոկրատական կուսակցութեան կատարեալ խորտակումը:

«Տեղեկութիւնները Թաւրիզից ստացվում են գրաքննված: Ներքին գործերի մինիստրութիւնը ծածկում է Թաւրիզում տեղի ունեցած արիւնահեղ դէպքերը: Ատրպատականի ռամկավարականների կոմիտէը հաղորդում է, որ ցաւալի է գործերի դրութիւնը Թաւրիզում. բազմաթիւ տներ ծակոտված են, երեւում են աւերակներ: Քաղաքում կատարեալ քաօս է տիրում. վարչութիւնը գլուխը կորցրել է. ոչ մի առեւտուր չը կայ. առեւտրականները սնանկանում են: Լուրերի համեմատ, Թաւրիզ կուղարկվի Եփրեմը բախտիարներով: Թէհրանում Թաւրիզի դէպքերի գլխաւոր յանցաւոր համարում են Թաւրիզի գեներալ-նահանգապետ Ֆարման-Ֆարմային, որը թոյլ տուեց յարձակումն ռուս զօրքերի վրա: Ասում են, որ ֆէդայիների զինման մասին արդէն վաղուց յայտնի էր, սակայն Թաւրիզի ադմինիստրացիան չը կարողացաւ տեսնել այդ պատրաստութիւնը, կարծելով որ ֆէդայիները պատրաստվում են յարձակումն գործել նախկին շահի կուսակիցների վրա, որոնք կողոպտում են Թաւրիզի շրջականներում գտնվողներին»: («Р. В.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. Հ. Բ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Շաբաթ, դեկտ. 17-ին, երեկ. ժամը ուղիղ 6-ին, Կ. Հ. Բ. Ընկերութեան շինութեան «Ղարաջեան» դահլիճում հայ քահանաները՝ գլուխ ունենալով Թեմիս առաջնորդի պաշտօնակատար Եփրեմ եպիսկոպոսին՝ կատարեցին հոգեհանգիստ Ընկերութեան հանգուցեալ բարերարների յիշատակին:

Ներկայ էին խորհրդի կազմը, գրական և մամուլի ներկայացուցիչներ և Թիւրքահայ կաթողիկոսական պատգամաւորները, իսկ հասարակութիւնից շատ քիչ անձինք:

Հետեւեալ օրը, կիրակի, դեկտ. 18-ին, Արտիստական Ընկերութ. մեծ դահլիճում կայացաւ հանդիսաւոր ընդհանուր ժողով Ընկերութեան գոյութեան 30-ամեայ յոբելեանի առիթով: Համաձայն խորհրդի յայտարարութեան, դահլիճում գտնվում էին նաև կողմնակի անձինք երկու սեռից, սակայն ոչ այն ցանկալի ստուար քանակով, ինչպէս պէտք է լինէր:

Ժամը 12½-ին խորհրդի նախագահ Ս. Յարութիւնեանը առաջարկում է ընտրել ընդհանուր ժողովի նախագահ:

Միաձայն ընտրվում է բաց քուէարկութեամբ ընկերութեան հիմնադիր բժշկապետ Նաւասարդեան:

Ժողովի նախագահը շնորհակալութիւն յայտնելուց յետոյ, համառօտակի ակնարկ է ձգում Ընկերութեան սկզբնաւորութեան վրա, և իր անհուն խնդակցութիւնն է յայտնում, որ իր հիմնած Ընկերութիւնը բոլորելով 30 տարի, այսօր այսպիսի հանդէսով տօնում է իր գործունէութեան յոբելեանը:

Նախագահի առաջարկութեամբ ժողովականները յարգում են Ընկերութեան հովանաւորող անդամ հանգուցեալ կաթողիկոս Իզմիրլեանի և Ընկերութեան հանգուցեալ բարերարների յիշատակը յոտնկայս:

Ապա խորհրդի անդամ բժ. Աղասարեան կարդում է իր կազմած տպված համառօտ տեսութիւնը Ընկերութեան 30-ամեայ գոյութեան մասին:

Բժ. Աղասարեանի ընթերցումից յետոյ Մ. Աղայեանի կազմած երգեցիկ խումբը երգեց «Որ վառեցեր» կանտատա-մարշը:

Նախագահը ապա յայտնեց, որ խորհուրդը առաջարկում է ժողովին Ընկ. պատուաւոր անդամ ընտրել Ն. Կ. Մ. Կովկասի Փոխարքայ կոմս Իլլարիոն Իվանովիչ Վորոնցով-Դաշկովին և սրա ամուսին կոմսուհի Ելիզավէտա Անդրէեւնային:

Խորհրդի նախագահը յայտնում է, որ Նորին Պայծառափայլութիւնը միշտ բարեացակամ վերաբերմունք է ցոյց տուել դէպի Կ. Հ. Բ. Ընկերութիւնը, հետաքրքրվել է նրա գործունէութեան ընթացքով: Նրա օրով Ընկերութիւնը շնորհիւ իր ճիւղերի ցոյց է տալիս կուլտուրական գործունէութիւն: Պակաս սիրալիր չէ դէպի Ընկերութիւնը և կոմսուհին, որ Ընկերութեան պարահանդէսներին ներկայ է գտնվում և իր լումն միշտ էլ չէ խնայում Ընկերութեան նպատակների համար: Փոխարքան վերջերս թոյլ տուեց հանգանակութիւն անել դպրոցական-ուսուցչական ֆօնդի համար:

Ժողովը ծափահարութեամբ միաձայն արձագանք է տալիս խորհրդի այդ առաջարկութեան և յանձնարարում է ժողովի նախագահ բժշկ. Նաւասարդեանին, խորհրդի նախագահ Ս. Յարութիւնեանին, խորհրդի անդամ տ. Հ. Առաքելեանին և քաղաքագլուխ Ա. Խատիսեանին ներկայանալ կոմսին ու կոմսուհուն, և յայտնելով նրանց ցոյց տրված պատւի որոշումը, յանձնել պատուաւոր անդամի դիպլոմը:

Կրկին երգվում է երգ:

Այնուհետեւ նախագահը կարդում է կաթողիկոսական տեղակալ Սուրէնեան արքեպիսկոպոսի օրհնութեան գիրը:

Ապա Թիւրքահայաստանի Սեբաստիայի առաջնորդ Թորգոմ եպիսկոպոսը ողջունում է Թիւրքահայերի կողմից, արտասանելով մի ճառ: Սրբազանը կանգ է առնում կազմակերպված սիրոյ գաղափարի վրա և մաղթում է, որպէսզի հայութեան մէջ «սրունքը սրինգի փոխվի և չարունակ տուր-տուր աղաղակը հնչէ»...

Նախագահը յայտնում է, որ Ընկերութեան հաստատման գործում իր աջակից և ամենքից յարգված ու սիրված ալեզարդ դրամատուրգ Գ. Սունդուկեան, անկարող լինելով գալ հանդէսին, իր շնորհաւորանքն է յղել:

Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան կողմից ռուսերէն ողջունում է քաղաքագլուխ Ալ. Խատիսեան, որ վերջացրեց՝ բարեմաղթելով՝ որպէսզի Թորգոմ սրբազանի «տուր-տուր» խօսքերին լսվի պատասխան՝ «տալի՛ս եմ, տալի՛ս եմ...»:

Եգիպտոսի Հ. Բարեգործական Ընդհանուր Միութեան մասին ամփոփ տեղեկութիւն տալուց յետոյ, ողջոյնի ջերմ խօսքեր է ուղղում Թիւրքահայ գրող Վ. Թեքէեան, որ ի միջի այլոց յիշատակում է յայտնի լրագրող հանգուցեալ Արփիար Արփիարեանին, որ առաջինը ծանօթացրեց Թիւրքահայերին Կ. Հ. Բ. Ընկերութեան գոյութեան հետ և սերտ փոխադարձ շաղկապ հաստատեց իր բեղուն թղթակցութիւններով հայութեան երկու խոշոր հատուածների միջև:

Կ. Պոլսի Միացեալ Ընկերութեան կողմից, համաձայն հեռագրական յանձնարարութեան, ողջունեցին Հ. Առաքելեան և Ա. Սարուխանեան:

Այնուհետեւ հետզհետէ շնորհաւորեցին ճառերով ու ուղերձներով հետեւեալ անձինք հետեւեալ հաստատութիւնների կողմից: Նախ նկատենք, որ բոլորի ասածները շուրջփակվում էին այն վկայութեամբ, թէ Կ. Հ. Բ. Ընկերութիւնը իր բարեգործական ու մանաւանդ կրթական-կուլտուրական գործունէութեամբ օգտակար ու կարեւոր գործօն է ռուսահայ կեանքում: Նա իր գործունէութիւնը համակրելի դարձրեց իր վերջին նախաձեռնութեամբ՝ սկիզբ դնելով դպրոցական-ուսուցչական հերթական ու անհրաժեշտ ֆօնդի հանգանակութեան: Ուստի և Կ. Հ. Բ. Ընկերութիւնը իր եռանդուն ու անձնուէր ղեկավարների շնորհիւ պէտք է աւելի եւս առաջադիմէ, ընդարձակվի, մեծանայ:

Բագուի Կուլտուրական Միութեան կողմից՝ բժ. Մանդինեան:

Թիֆլիսի Հայուհեաց Բ. Ընկ. կողմից՝ տ. Եր. Յարութիւնեան:

Զրի ու էժանագին ճաշարանի կողմից՝ տ. Իստամանեան:

Ներսիսեան դպրոցի հոգաբ. կողմից՝ ատամնաբոյժ Ն. Կաճկաճեան

Բագուի Հ. Մարդասիրական Ընկ. կողմից՝ երդ.-հաւ. Պապաջանեան:

Ներսիսեան դպրոցի ուսուցչական խմբի կողմից՝ Իս. Յարութիւնեան:

Վրաց Գրագիտաց Ընկերութեան կողմից վրացերէն՝ Զ. Մամուլեան:

Թիֆլիսի Վարժուհիներին Փոխադ. Օգնող Ընկերութեան կողմից ռուսերէն՝ տ. Ստառոսլսկայան:

Բագուի Կանանց Աշխատ. Ընկերութեան կողմից՝ տ. Ադամեան:

Յովնանեան օր. դպրոցի հոգաբարձութեան կազմի կողմից՝ Հ. Առաքելեան:

Նոյն դպրոցի մանկավարժական խմբի կողմից՝ Ստ. Մալխասեանց:

Թիֆլիսի Հայոց Դրամ. Ընկերութեան կողմից՝ Տ. Յովհաննիսեան:

Թիֆլիսի Գայիանեան օր. դպրոցի կողմից՝ Ս. Աբովեան:

Բագուի ծխական դպրոցների հոգաբարձութեան կողմից՝ Տ. Բէգզադեան և բժ. Սաղեան: Ի միջի այլոց Տ. Բէգզադեան «տուր-տուր» նշանաբանի վերաբերմամբ արդէն ցանկացաւ, որ որքան կարելի է շուտով վերանայ հայ ազգի միջից այդ «տուր-տուրը»:

Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութեան կողմից՝ բժ. Զարգարեան:

«Մշակի» խմբագրութեան և Թիֆլիսի Հայ Գիւղատնտ. ու Տնայնագործ. Ընկերութեան կողմից՝ Ալ. Քալանթար, ունենալով հետը Ընկերութեան վարչութեան անդամ տ. Ն. Դոլուխանեանին:

Թիֆլիսի Հայոց Ազգագրական Ընկերութեան կողմից՝ Գ. Մելիք-Ղարագեօզեան:

Թիֆլիսի Հայ Որբախնամ Ընկերութեան կողմից՝ տ. Ն. Ալիբէգեան:

Թիֆլիսի Օգտակար Գիտելիքներ Տարածող Ընկերութեան կողմից՝ Ց. Ալիխանեան:

«Աղբիւր-Տարազի» խմբագրութեան կողմից՝ Տ. Նազարեան:

«Հորիզոն» թերթի կողմից՝ Վանցեան:

«Հասկեր» մանկական թերթի կողմից՝ Ստ. Լիսիցեան:

Կ. Հայ Ուսուցիչների և Վարժուհիների Միութեան և «Նոր-Դպրոց» ամսաթերթի կողմից՝ Գր. Վարդանեան:

Երեւանի Օգտակար Գիտելիքներ Տարածող Ընկերութեան կողմից՝ բժ. Տէր-Միքայէլեան:

Թիֆլիսի «Լոյս» Ընկերութեան կողմից՝ Ա. Աւագեան:

«Սուրհանդակ» և «Խաթաբալա» թերթերի կողմից՝ Ա. Երիցեան:

Թիֆլիսի հայ դերասանների կողմից՝ Արմէնեան:

Մ. Ջմշկեանը կարդաց իր յօրինած ոտանաւորը Թիֆլիսի բարբառով:

Ց. Մալխասեան ասում է մի քանի խօսք:

Տէր-Ստեփանեանը՝ Թիֆլիսում Առեւտրական Գիտելիքներ Տարածող Ընկ. կողմից:

Ապա ողջունեցին Ընկերութեան ճիւղերի՝ ժողովին ներկայ եղող ներկայացուցիչներ Ապրէսեան, Ապրիլեան, Գափամաճեան և Տէր-Գաբրիէլեան քահանաները և այլ ներկայացուցիչներ, իսկ ներկայացուցիչ չունեցող ճիւղերի կողմից ստացվել էին ողջոյնի հեռագրեր:

Այնուհետեւ խորհրդի անդամ Կ. Շիրինեան կարդում է Թիֆլիսից դուրս գտնվող զանազան ազգային հիմնարկութիւնների և անձերի շնորհաւորական հեռագրերը:

Այսպէս օրինակ՝ Կ. Պոլսից, Մաղաքիա արքեպ. Օրմանեանից: Էջմիածնից՝ Սուքիաս արքեպ. Պարգեւեանից, Մեսրոպ եպիսկոպոսից, ճեմարանի մանկավարժական խմբից, տեսուչ Բագրատ վարդապետից. Պետերբուրգի Եկեղ. Խորհրդից, Պետերբուրգի հայ հասարակութիւնից (հանդերձ 1000 րուբլի նուէրով), Թիֆլիսի գաւառական ազնուականութեան պարագլուխ իշխան Ի. Թումանովից, մայրապետ կոյս Թայիբեանից, Պետական Դումայի պատգամաւոր Ց. Սաղաթէլեանից, և այլն, և այլն:

Ս. Յարութիւնեան վերջը արտասանում է շնորհակալութեան ճառ, շեշտելով Կ. Հ. Բ. Ընկերութեան նշանակութիւնը ռուսահայութեան համար, որի լայն աջակցութեան չափով խորհուրդը իրականացնելու է Ընկերութեան ընդգծած նպատակը նոր եռանդով, նոր աւիւնով, նոր ջանքով: Յարութիւնեան մասնաւորապէս շնորհակալութիւն է յայտնում Ընկ. հիմնադիր և ժողովի նախագահ բժշկապ. Բ. Նաւասարդեանին:

Վերջինս ջերմ ու խորին շնորհակալութիւն է յայտնում ժողովականներին, խորհրդին և Թիւրքահայ հոգեւորական ու աշխարհական հիւրերին: Վերջում Նաւասարդեան խնդրում է Կ. Պոլսի պատրիարքարանի ներկայացուցիչ Յակոբ Աշոտ եպիսկոպոսին օրհնել իր կողմից:

Սրբազան Աշոտ մի քանի խօսքերով օրհնում է Ընկերութեան բարերարներին, անդամներին յարատեւութիւն է մաղթում Ընկերութեանը և երկարատեւութիւն համայն հայութեան. վերջացնում է սրբազանը իր օրհնութիւնը «Հայր մերով»:

Դարձեալ խումբը երգում է և ժամը 3 և կէսին ժողովականները ցրվում են:

Նոյն օրը երեկոյեան Ժողովարանի դահլիճում տեղի ունեցաւ յոբելեանական երեկոյթ: Դահլիճը զարդարված էր հայկական ոճով, սիրուն կերպով: Նուագում էին եւրոպական ու ասիական նուագախմբեր: Բացի դրանից երգում էր Մ. Աղայեանի ղեկավարութեամբ երգեցիկ երկսեռ խումբը ազգային տարազով:

Ապա հանդէս եկան սոլօ երգերով տ. տ. Նաւասարդեան, Աֆրիկեան, Դանիէլեան: Դերասանուհի Մայսուրեան արտասանեց ոտանաւորներ: Ջութակահար Վրոյրը հմտութեամբ և բոլորի գովասանքին արժանանալով նուագեց մի քանի կտորներ:

Երեկոյթը իրանց այցելութեամբ պատուեցին Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկով և կոմսուհի Ելիզավէտա Անդրէեւնա իրանց շքախմբով: Ներկայ գտնվեցին նաև Փոխարքայի օգնական սենատոր Վատացի, քաղաքագլուխ Ալ. Խատիսեան, ոստիկանապետը և այլն:

Խորհուրդը՝ իշխանուհի Մ. Թումանեանի և Ս. Յարութիւնեանի գլխաւորութեամբ առաջնորդեց բարձրաստիճան հիւրերին դահլիճ, ուր հոծ բազմութիւնը մի քանի րոպէ ծափահարութեամբ ողջունեց կոմսին և կոմսուհուն Կ. Հ. Բ. Ընկ. պատուաւոր անդամներ ընտրվելու առիթով:

Այնուհետեւ կոմսը և կոմսուհին դիտեցին ասիական ու երաժշտական պարերը, շրջեցին դահլիճի մասերը, մասնակից եղան ծախքերին և մնալով մի ժամից աւելի՝ շատ լաւ ու գոհ տրամադրութեամբ մեկնեցին:

Աւելացնենք այստեղ, որ Ընկերութիւնը և իշխանուհի Մ. Թումանեանը արծաթեայ գեղեցիկ ընծաներ են մատուցել կոմսին և կոմսուհուն:

Ասիական և եւրոպական պարերը շարունակվեցին մինչև ուշ գիշեր: Թանգագին 3 վազաները, 140 ր. արժողութեամբ, ընկան վիճակահանով № 1060 տոմսին:

Նիւթական հասոյթն էլ առատ է: Ե.

ՀԱՄԱԿՐԱԿԱՆ ՑՈՅՑ ՕՐՄԱՆԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ ՀԱՍՑԷԻՆ

Կիրակի, դեկտեմբերի 18-ին, Կ. Հ. Բար. Ընկ. 30-ամեայ յոբելեանական հանդէսի վերջին, երբ սկսվեց շնորհաւորական հեռագրերի ընթերցումը, և երբ հանդիսականների մի մասը հեռացել էր, տեղի ունեցաւ մի իմպօզանտ համակրական ցոյց Օրմանեան արքեպիսկոպոսի հասցէին: Օրմանեան սրբազանի շնորհաւորական հեռագրի ընթերցումը վերջանալուն պէս, ամբողջ դահլիճը թնդաց որոտընդոստ ծափահարութիւններով և «կեցցէ Օրմանեան» աղաղակներով, որոնք տեւեցին ամենաքիչը 5 րոպէ: Ցոյցը այնքան անակնկալ էր և տպաւորիչ, որ նոյնիսկ Թիւրքահայ եկեղեցական պատգամաւորներից ոմանք՝ հակաօրմանեանական՝ սկսել են ծափահարել, մնալով շուարած: Այդ միջոցին մի երկու անձինք, կամենալով որպէս թէ չէզոքացնել ցոյցի ազդեցութիւնը, սկսում են սուլել, բայց նրանց այդ խուլիգանական վարմունքը հանդիպում է հանդիսականների կողմից այնպիսի մեծ զայրոյթի և բողոքի, որ սուլողները ստիպված են լինում թագնվել և երեան չը հանել իրանց դէմքը:

Եթէ հանդիսականների մի մասը հեռացած չը լինէր — հեռացել էին գլխաւորապէս օրմանեանականներ — ցոյցը աւելի մեծ և դղրդուն կը լինէր:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ «Մշակի» ներկայ համարը բաղկացած է 1½ թերթից: Կիսաթերթը նուիրված է «Մշակի» 40-ամեայ յոբելեանին: Այդ թերթը պէտք է հրատարակվէր երէկ, «Մշակի» հիմնադիր Գրիգոր Արծրունու մահվան տարելիցի օրը, դեկտեմբերի 19-ին, բայց ելնում է այսօր, որովհետեւ «Մշակի» համարը լոյս է տեսնում միայն այսօր, դեկտեմբերի 20-ին:

◆ Մայրաքաղաքի թերթերում տպված են հեռագրական տեղեկութիւններ կաթողիկոսական ընտրութեան մասին: Տպված է նաև տեղեկութիւն Ռուսաստանի թեմերի ներկայացուցիչների ստորագրութեամբ ներկայացված բողոքի մասին:

◆ Երէկ Թիւրքահայ հոգեւորական և աշխարհական պատգամաւորները այցելեցին Հայոց Ազգագրական Ընկերութեան թանգարանը և ցանկութիւն յայտնեցին, որ Թիւրքիայումն էլ հիմնվէր մի այդպիսի ընկերութիւն թէ հայրենի հնութիւնները պահպանելու և թէ ազգագրական բազմազան նիւթերը հաւաքելու, որոնք սաստիկ արագութեամբ կորչում անհետանում են: Միեւնոյն ժամանակ ցաւ յայտնեցին, թէ ինչու ռուսահայ կուլտուրական ժողովուրդը դեռ մինչև այժմ չի ապահովել մի այսպիսի ընկերութիւն, որի անհրաժեշտութիւնը միանգամայն ակնյայտ է:

◆ «Р. Сл.»-ի թղթակիցը ի միջի այլոց հեռագրում է Էջմիածնից. «Գէորգ արքեպ. Սուրէնեանի կաթողիկոսական առաջին թեկնածու ընտրվելը հանդիսացաւ բաւական անսպասելի, որովհետեւ ընտրութեան սկզբում որոշված էր առաջին ընտրելի Դուրեանը: Ընտրվել է մի պատգամաւորութիւն Եփրեմ եպիսկոպոսից, Յարութիւնեանից և Միքայէլեանից՝ ներկայանալու Փոխարքային և յայտնելու ընտրութեան հետեւանքը»:

◆ Ի պատիւ Կովկ. Հայոց Բարեգործ. յոբելեար Ընկերութեան հիմնադիր բժշկապետ Բ. Նաւասարդեանի, ուրբաթ, դեկտ. 23-ին, Գրական-Գեղարուեստական Սալօնի հերթական jour fixe-ը կը կայանայ փայլուն ծրագրով: Երաժշտական մասը ղեկավարելու է տ. Յուլիանէ Սպենդիարեան: Մասնակցելու են տեղական ընտիր ոյժերը: Կը կայանայ պատմական կենդանի պատկեր, զեկուցում-զրոյց: Լոյս կը տեսնի «Տարազի» շատ ճոխ «Մնայուն յուշարձան Կ. Հ. Բ. Ընկ. 30-ամեակի»: Մուտքը հրաւէրով:

◆ Թիֆլիսի քաղաքային մասնաժողովը էլեկտրաքարշի ընկերութեանը դարձեալ 10,180 ր. տուգանքի ենթարկեց դեկտեմբեր ամսվայ առաջին կիսին պակաս թւով վագոններ պահելու համար:

◆ Բարձրագոյնս հրամայված է Թիֆլիսում պարսից փոխ-հիւպատոս ճանաչել պարսկահպատակ Միրզա Մօհամէդ-խանին:

◆ Թիֆլիս եկաւ անդրկովկասեան երկաթուղիների նոր կառավարիչ գեներալ բարոն ֆօն-դեր-Րօօպը և ստանձնեց իր պարտականութիւնները Փոխարքային ներկայանալուց յետոյ:

◆ Շաբաթ օրը, վրաց սեմինարիայի հին շինութեան մէջ բացվեց վրաց էկզարխութեան հոգեւորականութեան պատգամաւորների համագումարը աւագ քահանայ Խախուտովի նախագահութեամբ: Կիրակի օրը պատգամաւորները ներկայացան Վրաստանի էկզարխի անձնափոխանորդ Պիմէն եպիսկոպոսին:

◆ Սահմանադիր-ռամկավար կուսակցութեան լիդեր, Պետական Դումայի անդամ Ֆ. Ի. Րօդիչեվը, որը Պետերբուրգից ճանապարհվել է դեկտ. 15-ին, Թիֆլիս ժամանեց դեկտեմբերի 19-ին:

◆ Կիրակի, դեկտ. 18-ին, յայտնի բարեգործ Սարաջեվի մահվան կիսամեակի առիթով Դիդուբէի եկեղեցում կատարվեց հոգեհանգիստ վրաց ինտելիգենցիայի և մամուլի ներկայացուցիչների ներկայութեամբ:

◆ Թիֆլիսի և Բագուի միջև արդէն գործում է հեռախօսը: Իւրաքանչիւր 3 րոպէ խօսելու համար վճարն է 1 րուբլի, իսկ յետոյ իւրաքանչիւր մի րոպէի համար պէտք է աւելացնել 30 կ.: Կարելի է խօսել նաև Գանձակի հետ:

◆ Վրաց «Դիլա» էժանագին օրաթերթը դադարեց:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Էջմիածին, 17 դեկտեմբերի

Ամսիս 13-ի ընտրութեան առիթով Ռուսաստանի և արտասահմանի քաղաքներից մեր ստացած բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներին հնարաւորութիւն չունենալով մէկ-մէկ պատասխանել, սրանով յայտնում ենք բոլոր շնորհաւորողներին մեր սրտագին շնորհակալութիւնն ու հայրական օրհնութիւնը:

Տեղակալ կաթողիկոսի ամենայն հայոց՝
Գէորգ արքեպիսկոպոս

Կիեւ, 12 դեկտեմբերի

Կիեւի Առեւտրական Ճեմարանի Հայ Ուսանողական Կասսայի վարչութիւնը իր և Կասսայի անդամ հայ ուսանողների կողմից ի սրտէ շնորհաւորում է «Մշակի» քառասնամեայ յոբելեանը, ցանկանալով ոյժ ու եռանդ նրա աշխատակիցներին ու ղեկավարներին՝ յանձին Ալ. Քալանթարի ու Հ. Առաքելեանի, շարունակելու «Մշակի» խմբագրութեան գործը աւելի մեծ եռանդով, որպէսզի դեռ երկար տարիներ կանգուն մնայ այն կոթողը, որ կանգնեցրեց «Մշակի» հիմնադիր անմահ Արծրունին:

Փշոտ ու տատասկոտ էր Արծրունու ճանապարհը, դժուար ու պատասխանատու նրա գործը. հեշտ չէ, ի հարկէ, և ձերը, մանաւանդ մեր այժմեայ փշոտ անդաստանում: Բայց, պարոններ, մի վհատէք. աշխատանքն արժանի է իր պատուաւոր վարձատրութեան: Հայ ուսանողութեան թէպէտ փոքր, բայց գիտակից մասը միշտ երախտապարտ կը մնայ ձեզ:

Ի դիմաց Կիեւի Առեւտր. Ճեմ. Հայ. Ուսան. Կասսայի վարչութեան՝
Ուսանող՝ Եղիա Թամանցեան

Ախալցխա, 15 դեկտեմբերի

Էջմիածնի կաթողիկոսական պատգամաւորների «մեծամասնութեան» բռնի վերաբերմունքը դէպի ժողովրդական իսկական ընտրելիները՝ խորին վիշտ ու զայրոյթ պատճառեց: Խեղդեցին Կովկասի հայ ժողովրդի զգալի մեծամասնութեան ցանկութիւնը, արդար իրաւունքը: Ապօրինի միջոցներով գլուխ բերվեց թայֆայականների ազգավնաս առաջարկութիւնը՝ «ով ուզում է թող ընտրվի կաթողիկոս, սակայն թող Օրմանեանը չը լինի»... (!?): Այդպէս էլ եղաւ. ընտրվեց ուրիշը՝ միայն Տէր-Անդրէասեանների, Հայկազնի, Մելեանի քուէներով...

Մենք ևս միւսների հետ բողոքում ենք այդ բռնութեան դէմ, բողոքում ենք մեր Թիւրքահայ այն պատգամաւորներին, որոնք ոտի տակ տալով կովկասահայ ժողովրդի իրաւունքը՝ ծառայեցին միայն իրանց եսին եւ անձնականութեան:

Սրբազան Օրմանեանի անունը աւելի վսեմացաւ. կեցցէ Օրմանեանը, կեցցէ մեր մարդը:

Յարգանք և խրախոյս ժողովրդի ընտրելի պատգամաւորներին. յարգանք ու պատիւ ազգի և եկեղեցու անկեղծ ու անկաշառ ծառայողներին, որոնք ժողովրդի իրաւունքի բռնաբարման դէմ բողոքելով դուրս եկան համազգային կոչված ժողովից:

41 ստորագրութիւն

Թիֆլիս, 17 դեկտեմբերի

«Մշակի» № 275-ում տպված է Էջմիածնից մի տարօրինակ հեռագիր, որի մէջ հաղորդվում է, թէ իբր ես և մի քանի ուրիշ պատգամաւորներ վատ դեր ենք խաղացել «Թիւրքիայի և Ռուսաստանի հայութեան միջև խորը վիհ բացող պառակտման և անհաշտութեան գործում»:

Այս լուրը միանգամայն անհիմն է և անարդար:

Նախ՝ պատգամաւորական ժողովի մեծամասնութիւն կազմող պատգամաւորների կողմից ամենավստահ կերպով յայտնում եմ, որ այդ պատգամաւորները ներշնչված էին անկեղծ ցանկութեամբ՝ համաձայնութեան գալու փոքրամասնութեան հետ, բայց դժբաղդաբար այդ չաջողվեց:

Երկրորդ՝ անձամբ իմ մասին էլ սխալ է յիշեալ լուրը: Թէ որքան արդարացի են իմ այս խօսքերը, բաւական է առնել ի նկատի, ի միջի այլոց, հետեւեալ կտորը պաշտօնական արձանագրութիւնից, որը կազմված է 12 դեկտեմբերի:

«Ժողովի ատենապետը մի առ մի բացատրեց փոքրամասնութիւն կազմող խմբակի բռնած դիրքը հանդէպ ընտրական գործի: Ատենապետը, յանուն ազգային շահերի, հարկաւոր էր համարել իր կողմից, իբր Սամսոն Յարութիւնեանի, նորէն ջանքեր գործ դնել և բերել նրանց ի համբաւոր համաձայնութեան, նոյնիսկ իր կողմից առաջարկեց մտցնելու Օրմանեան սրբազանի անունը քառանուն ցանկի մէջ, վստահ լինելով որ Օրմանեան սրբազանը քառանուն ցանկը քուէարկելիս երբէք չի անցնի: Ժողովականները խիստ հոգեկան ճնշման ներքոյ եկան այն հաստատ համոզման, որ անհնարին է համաձայնել դնելու Օրմանեան սրբազանի անունը, իբրև պարզապէս անընդունելի»:

Բացի այս, իմ գործ դրած ջանքերի մասին՝ համաձայնութիւն կայացնելու նպատակով՝ կարող են վկայել շատ-շատերը նոյնիսկ հակառակ խմբակին պատկանող պատգամաւորներից. ի միջի այլոց, պատգամաւոր Շամախի թեմի բժ. Թադէոս Զաքարեանը: Ս. Յարութիւնեան

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ

«Մշակի» № 275-ում տպված և Էջմիածնից իմ խփած հեռագիրը, թէ պառակտման և անհաշտութեան գործում վատ դեր է խաղացել նաև Սամսոն Յարութիւնեանը, ամենևին տարօրինակ չէ, այլ զուտ իրողութիւն և ճշմարտութիւն: Դրա ապացոյցները մենք կը բերենք մեր տպաւորութիւնների մէջ, և հայ հասարակութիւնը կը տեսնի, թէ Սամսոն Յարութիւնեանը շարունակում է երկդիմի, հասարակական գործչին անվայել վարմունքը և գործելակերպը: Հ. Ա.

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Ներկայումս պատերազմի դաշտում իտալացիները ունեն զանազան տեղերում 120,000 զինւոր: Գեներալ Կանէվան դարձեալ պահանջում է 40,000 իբրև պահեստի զօրք:

◆ Իտալացիները վերջին կռւում, համաձայն Թիւրքական տեղեկութիւնների, տուել են 500 սպանված:

◆ Իտալիան մինչև օրս պատերազմի վրա ծախսել է 200 միլիոն լիր:

◆ Ներկայումս Թիւրքիան շարունակում է մտքերի փոխանակութիւն ունենալ ռուսաց կառավարութեան հետ Ուրմիայի շրջանի մասին:

◆ «Рѣчь»-ի թղթակիցն մի ռուս դիպլոմատ ասել է, որ Պարսկաստա-

Նաև ագիտատորների թւում գտնւում են շատ փախստական ռուսներ։

◆ Չեչէնների վրա դրված է նորից 11,400 ր. տուգանք՝ Զելիմ-խանին թագցնելուն համար։

◆ Ամերիկական լրագիրների ասելով՝ ռուսների վրա յարձակումները Թաւրիզում շարունակվում են։

◆ «Бир. Вѣд.»-ի Լօնդօնի թղթակիցը հաղորդում է, որ պարսից դեպքերը արգասիք են Թիւրքիայի պնդումների։

◆ «Нов. Вр.»-ն հաղորդում է, որ Ռաշտում հայ եկւորները նոր յարձակումներ են գործ դրել ռուսաց զօրքերի վրա։

◆ Ներկայումս Թաւրիզում գտնւում են ռուսական 5000 զինւոր։

◆ «Нов. Вр.»-ի տեղեկութիւնների համաձայն, Թաւրիզ է մտել Սամադխանի զօրքը։ Թաւրիզից անյայտացել են 130 հայ յեղափոխականներ, որոնք ռուսների դէմ կռւում էին թիւրքահայ Ղարաբէկի հրամանատարութեան տակ, որը իբր հրահանգներ է ստանում Եփրեմից։

◆ Ռուս յեղափոխականների մուտքը Կովկաս արգելելու նպատակով՝ ուժեղացված է հսկողութիւնը պարսկական սահմանագլխին։

◆ Թաւրիզից Թէհրան հեռագրում են, որ ռուսաց հիւպատոսարանում սպանվել են 13 մարդ։ Զապլինի զօրամասում սպանվել ու վիրաւորվել են 100 հոգի։

◆ Անգլիան նոր զօրքեր է ուղարկում Պարսկաստան։ Զօրքերին տրված են նոյն տեսակի հրահանգներ, ինչպիսին տրված է և ռուս զօրքերին։

◆ Թաւրիզում նոր ընդհարում է եղել։ Ռուսներից սպանվել են 5 և վիրաւորվել են 4 մարդ։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺԻՇԿ

Յ. ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐԵԱՆ

(ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ)

Ներքին և երեխայոց հիւանդութիւններ
(Մասնագիտ. ԹՈՔԵՐԻ հիւանդութիւններ)

Ընդունե- (առաւօտեան ժ. 12—1-ը։
լութիւնը (երեկոյեան ժ. 4—6-ը։
Բէբուտովսկայա, № 66.
(ա.օ.) 1035. 100—42

ԲԺՇԿՆ. ՖԷԼԴՇԷՐ

Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ

Սրսկումներ, տրիպէրի լուացումներ, վիրաբուժութիւն, մասսաժ, էլեքտրականութիւն։ Հիմնաւոր բուժումն սուր և խրօնիք. տրիպէրի, սերմնահոսութեան, սեռական թուլութեան և անկարողութեան՝ հմուտ բժիշկ. ցուցմունքով։ Օտարերկրեայ հիւանդներին գրաւոր խորհուրդներ և րեցեպտներ (վճարը 3 ր.)։ Եկւորներին ցոյց եմ տալիս հմուտ մասնագէտ բժիշկների բոլոր հիւանդութիւնների. նաև կանանց և ծննդաբեր. հիւանդ. բժիշկների։ Ծառայողներին և աշակերտ-աշակերտուհիներին բժ. օգնութիւնը մեծ զիջումով։ Իմ կազմած «Գաղտնի հիւանդութիւնների բժշկարանը», գինը 50 կոպ., կարելի է պահանջել ինձանից կամ Թիֆլիսի բոլոր հայ գրախանութներից նալօժով։ Ընդունելութիւնը՝ կանանց 2—3 ժ., տղամարդկանց 3—4 ժ. ամեն օր։ Հասցէս. Тифлисъ, Семеновская ул., № 9, Վօրոնցօվի արձանի մօտ։

(ե.հ.կ.) 892. 50—41

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՐՕՆՈՒՍՈՅՑՆԵՐԻՆ

Բանաւոր անցած ԿՐՕՆԻ նիւթը վերյիշելու համար եթէ մտադիր են Ա. բաժանման գրավարժ դարձած աշակերտներին դասագիրք տալ յունվարից, կարող են ձեռ բերել «ԿՐՕՆ Ա. տարի» (աշխարհաբար աղօթքներ, մանկական զրոյցներ և Յիսուսի կեանքից պատմուածներ)։

ԳԻՆԸ ՄԻԱՅՆ 10 ԿՕՊ.։

Դիմել Թիֆլիսի գրավաճառներին։

Քամալեանց Ս. դպիր.

(ե.հ.կ.) 1180. 3—1



КАКАО
КЪ ЗАВТРАКУ
КЪ FIVE O'CLOCK'Y
ТЕПЕРЬ ПЬЮТЪ
КАКАО
ВАНЪ-ГУТЕНА.
ЭТО СЧИТАЕТСЯ
ХОРОШИМЪ ТОНОМЪ!
Единственные фабриканты C. J. VAN HOUTEN & ZOON, Weesp (Голландія).
НАСТОЯЩІЙ ТОЛЬКО ВЪ ЗАГРАНИЧНОЙ УПАКОВКѢ СЪ ТАКОЙ МАРКОЙ.
ВАНЪ-ГУТЕНЪ

Главный складъ у Торговаго Дома Гебертъ фонъ ШВАРЦТАЛЬ и К°, Одесса.

(М.466898) 1—1

Գեղեցկութիւնը բարձր կատարելութեան է հասած

№4711

ՎԱՐԴԻ ԲԻՒՐԵՂԵԱՅ ՍԱՊՈՆԸ

երեսի կաշուն և գոյնին տալիս է այն քնքուշութիւնը, հարթութիւնը և առաձգականութիւնը, որոնք համարվում են ամենաբարձր գեղեցկութեան իսկական նշանները։ Կտորը 25 կոպ.։ Կայ ամենուրեք!

Ֆերդ. Միւլհէնս պարֆիւմէրիա № 4711

Կէօլն-Րէյնի վրա։ Րինգ ա։ Հիմնված 1792 թ.։



(М. 341516/341546) 7—4

ԼՈՒՍԱԳՈՅՆ ՆՈՒԷՐ

Երեխաների համար

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ինքնուրոյն գրուածքներից և ժողովրդական նիւթերից կազմած գունաւոր պատկերազարդ Մանկական Գրադարանը.

Հրատ. ԻՆԽ. Մ. ԹՈՒՄԱՆԵԱՆ և ԸՆԿ.

1) «Շունն և կատուն»	25 կ.
2) «Անբաղդ վաճառականներ»	35 կ.
3) «Գառնիկ ախպէր»	50 կ
4) «Անյաղթ աքլորը»	15 կ.
5) «Ծիտը»	15 կ.
6) «Ուլիկը»	15 կ.
7) «Աղուէսը»	15 կ.
8) «Տէրն ու ծառան»	15 կ.
9) «Խօսող ձուկը»	15 կ.
10) «Գիքորը»	50 կ.
11) «Մի կաթիլ մեղրը»	50 կ.
12) «Փոքրիկ ձկնորսը»	40 կ.
13) «Լեզուն կտրած ծիտիկը»	40 կ.
14) «Ոսկի քաղաքը»	25 կ,

Դիմել Թիֆլիսի գրավաճառներին և Փ. Վարդազարեանին՝ Тифлисъ, Вельяминовская ул. 22.

(17,20,20) 1168. 3—2

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ

ՅԱՇԻՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

Ն. Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

(Գոյութիւն ունի 1895 թ.)

Հեղինակ առևտրական հաշւապահութեան ձեռնարկի, և զանազան մասնագիտական ձեռնարկների։

Տալիս է երկու սեռի անձանց մասնագիտական առևտրական գիտութիւն 4-ամսեայ դասընթացքում, ամենօրեայ պարապմունքներով։

Դասընթացքներում անցնում են.—Առևտրական և արդիւնաբերութեան զանազան ճիւղերի հաշւապահութիւն, նաւթարդիւնաբերութեան և նաւթագործութեան ճիւղի հետ միասին, զանազան մեթօդներով, կատարեալ լրացումն կրկնակի իտալական սիստեմով և առևտր. թղթաբանութիւն, առևտր. նամակագրութիւն, մուրհակային և առևտրական իրաւունքների, քաղաքատնտեսութիւն, վատ ձեռագրի ուղղումն։

Ոչ պարտադիր առարկաներն են՝ 1) Օտար լեզուներ, 2) Ստենօգրաֆիա (սղագրութիւն) և 3) Ռեմինգտոնի վրա գրել։

Ուսուցիչները բարձր կրթութիւն ստացած մասնագէտներ են, որոնք գործնականապէս և տեսականապէս պատրաստված են ամեն մի առարկայի համար առանձին։

Վկայագրերը տրվում են մինիստրութեան թոյլտուութեամբ։

Պարապմունքների սկիզբը 1912 թ. յունվարի 15-ից։ Խնդրագիրների ընդունելութիւնը ամեն օր առաւօտեան ժամը 9—11-ը, երեկ. 5—7-ը։ Ծրագիրը և կանոնները տրվում և ուղարկվում են ձրիաբար։

Դասընթացքներին կից հաստատված են քիչ պատրաստված անձանց համար առանձին պատրաստողական և լրացուցիչ դասարաններ ռուսաց լեզուի և թւաբանութեան համար։

Անձամբ և նամակներով դիմել՝ Тифлисъ, Учредит. Бухгал. Курсовъ Н. В. Абраамяну, Николаевская, 22, Телефонъ 744.

(կ. շ.) 1178. 0—1

ОБЪЯВЛЕНІЕ

Симъ объявляемъ, что въ скоромъ времени въ гор. Баку открывается контора объявленій съ обезпеченнымъ залогомъ подъ фирмою

первая на Кавказѣ Международная контора Объявленій

„КАВКАЗЪ“

Контора объявленій будетъ производить пріемъ объявленій и подписки во всѣ мѣстныя, иногороднія и заграничныя газеты и журналы.

Пріемъ объявленій **НА ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКАХЪ.** Пріемъ подписки

А также будетъ издавать широкораспространенныя рекламы на всѣхъ языкахъ, какъ то: плакаты, брошюры, прейскуранты и пр.

Пріемъ переводовъ на русскій, армянскій, грузинскій, татарскій (персидско-адербежанскій) и на другіе языки, гарантируя точность перевода.

О днѣ открытія и адресъ К-ры будетъ объявлено особо во всѣхъ газетахъ.

Временный адресъ: БАКУ, Николаевская ул. ред. газ. „Ени-Иршадъ“. Тел. 21—12 и 15—02. Почтовый ящикъ № 258.

Съ почтеніемъ *Г. Яковлевъ, П. Джалагонія и А. Мурадовъ.*

1179. 5—1

ՊԱՀԱՆՋԵՑԷՔ ՈՒՂԻՂ և ԴԻՄԱՑԿՈՒՆ ԺԱՄԱՑՈՅՑ!

Ուրիշ էժան ժամացոյցների տեղից մի ընկնէք։

Լաւ ժամացոյցը միշտ իր արժէքն ունի

ՊԱՐԻԶԻ ՎԵՐՋԻՆ ՆՈՐՈՅԹ

Ժամացոյց «Խրօնօմետր» սիստ., 200 ր. արժեցող ոսկէ ժամաց. փոխարէն՝ առաջարկում եմ 5 ր. 25 կ.-ով «Խրօնօմետր» սիստ. ժամաց., որը իր ձևով և գեղեցկութեամբ յետ չէ մնում ոսկէ ժամաց., իսկ նրա մեխանիզմի և մետաղի լաւ յատկութեան համար «Խրօնօմետր» ժամացոյց երաշխաւորում. 10 տարով։ Այդ ժամաց. Շվէյցարակ. իսկական նոր ոսկուց է՝ տղամարդու կամ կանանց—3 հաստ կափարիչով, լարումը գլխի կողմից 40 ժամը մի անգամ 15 քարի վրա։ Տափակ, համաձայն նկարի. շատ տարածված են և մեծ քանակութեամբ ծախվում են ամբողջ Եւրօպայում։ Գինը 5 ր. 25 կ., 2 հատը՝ 10 ր., 4 հատը՝ 19 ր. 50 կ.։ Գները նշանակված են էժան, որպէսզի ամենքին հնարաւորութիւն տրվի օգտվելու այս ժամացոյցով։ Պատուէրները ուղարկվում են վերադ. վճար. առանց կանխավճարի։ ՁՐԻ ուղարկվում է ամեն մի ժամաց. հետ պարիզեան գեղեցիկ երկփեղկ շղթայ իսկակ. նոր ոսկուց բրելօկով և զամշէ քսակով ժամաց. համար։ Ժամաց. ուղարկվում է մինչև բոլէն ստուգած 6 տարվայ երաշխաւորում։ Առանց ռիսկի, եթէ ապրանքը չը հաւանէք, փողը յետ ենք վերադարձնում։ Ճանապարհածախս մաքսի հետ միասին 40 կ. (Սիբիր 75 կ.)։ Հասցէն կարելի է գրել և կպցնել բաց կամ փակ նամակին

Берлинъ Berlin 91 I. Strumfeld. Kloster str. 42.

Պատուէրների համար կարող էք դիմել ամեն լեզուով. փակ նամակին կպցնել 10 կ., բաց նամակին՝ 4 կ. մարկա։

(В. 60002) 872. 7—7

ԱՄԵՆԱԼԱՒ ԸՆԾԱՅ

ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Իսկական գրամոֆօնը „ԳՐՈՂ ՀՐԵՇՏԱԿ“ մարկայով

TRADE MARK „GRAMMOPHON“

Յատկապէս առաջիկայ տօների համար վաճառքի են հանված պլաստինկաներ նորագոյն, միանգամայն յաջող գրութիւններով—այն է՝ երգիչներ ԲԱԳՐԱՏԻ, ՆԻԿՈԼ ԲԱՎԷՑԵԱՆՑԻ, ԿՈՍՏԱՆԵԱՆԻ և այլ նշանաւորների անձերի կատարումներից կազմված։

ՊԱՀԱՆՋԵՑԷՔ ՁՐԻԱԲԱՐ

պլաստինկաների և ապարատների մեր նորագոյն կատալօգները։

„ԳՐԱՄՄՕՖՕՆ“ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍ, Գօլօվինսկի պր. № 9.

(18, 20) 1161. 10—3

ԿԱՊՈՒԹԵԱՆ դէմ ֆրանսիական ժողովրդական միջոցը տարածելու նպատակով մենք վաճառում ենք փոքրիկ արկղիկներով, իւրաքանչիւրի մէջ

20 դեղհատ

Գինը 50 կոպէկ

КАСКАРА
МИДИ
L Midy

1—2 դեղհատ երեկոյեան՝ քնելուց առաջ։ Այդ արկղիկները, նոյնպէս և 50 դեղհատ պարունակողները, կարելի է ձեռք բերել բոլոր դեղատներում և դեղատնային խանութներում։

(5,20) (М. 337683) 962. 18—6

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Մասնագէտ սիֆիլիս (606), միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւնների։ Էլեքտրաբուժութիւն։

Ընդունե- ($12\frac{1}{2}$—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ առ. ժ. 9—10-ը։

Սօլօլակ, Բէբուտովսկայա, № 33 (անկիւն Պասկէվիչի փողոցի)։ Տէլէֆօն № 1175.

(ե. հ.կ.) 888. 100—44

ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՕՐԻԱ

(Իզմայլովսկի պր., № 27)

Փարիզ, 1900. ՈՍԿԷ ՄԵԴԱԼ Նիժնի-Նովգօր. 1896.

ՔԻՆԱՅԻ ՊՈՄԱԴԱ

ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ և ԹԵՓԻ ԴԷՄ

С.-ПЕТЕРБУРГСКАЯ ХИМИЧЕСКАЯ ЛАБОРАТОРІЯ
ЗАЯВЛЕНО ДЕПАРТАМЕНТУ ТОРГОВЛИ И МАНУФАКТУРЪ

Ընտանեկան պօմադա։ Ֆիլօկօմ պօմադա։ Պօմադա-վազելին։

Գլխաւոր պահեստը. Кавказское Т-во Торговли Аптекарскими Товарами—Тифлисъ, Баку, Батумъ. 521. 8—8

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԱՆՕՆԻՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Աւտօմօբիլային հաղորդակցութեան Կովկասում

ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

Նոյեմբերի 2/15-ից 1911 թ.

ԲՈՐԺՕՄԻ, ԱԽԱԼՑԽԱՅԻ և ԱԲԱՍԹՈՒՄԱՆԻ միջև։

Բօրժօմից Ախալցխա մեկնումը ամեն օր, երեկ. ժամը 4-ին։
Ախալցխայից Բօրժօմ մեկնումը առաւօտեան ժամը 9-ին։
Շաբաթական մէկ անգամ, ուրբաթ օրերը, աւտօմօբիլը կը գնայ մինչև Աբասթուման և կը վերադառնայ հետևեալ օրը՝ շաբաթ, առ. ժամը 8-ին, մեկնելով նաև Ախալցխա առ. մօտ ժամը 9-ին։

ԳՆԵՐԸ {
Բօրժօմ—Աբասթուման՝ 5 ռուբլի։
Բօրժօմ—Ախալցխա՝ 3 ռուբլի։
Ախալցխա—Աբասթուման՝ 2 ռուբլի։

Բագաժի համար՝ առանց արտօնեալ 1 պուդի՝ իւրաքանչիւր պուդին 50 կ.։

(ե.հ.շ.կ.) 1066. 4—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.

„ՄՇԱԿԻ" ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ № 2

(ՅԱՒԵԼՈՒԱԾ „ՄՇԱԿԻ" № 280-Ի)

ՈՂՋՈՅՆ ՔԱՌԱՍՆԱՄԵԱՅ «ՄՇԱԿԻՆ»

Յարգելի խմբագրութիւն
«Մշակ» լրագրի.
Ընդունեցէք շնորհաւորութիւն
1872—1912 թ. թ.
Քառասնամեայ ձեր երիտասարդ
Անխոնջ «ՄՇԱԿԻՆ».
Սէր, յարգանք և երկարատև կեանք
Ի պատիւ և փառք հայ ազգին։
Միք. Ալլահվերդեան

Պետերբուրգ, 8 դեկտեմբերի

«ՄՇԱԿԻ» ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

> «Շարժումը մեր պարտաւորութիւնն է.
> Անշարժութիւնը ձեր իրաւունքն է»։
> Գր. Արծրունի

Եօթանասնական թւականներին Կովկասը աստիճանաբար մտնում է խոշոր արդիւնաբերութեան շրջանը. Բագւում սկսում է զարգանալ նաւթարդիւնաբերութիւնը, իսկ Թիֆլիսում և մի քանի այլ վայրերում հիմնվում են բացառիկ թւով գործարաններ՝ տակաւին սահմանափակ թւով բանւորներով։

Հասարակական-տնտեսական կեանքի տիրապետող ձևը սակայն այն կերպարանքն ունէր, որ գիւղը դեռ ևս բնական տնտեսութեան շրջանն էր անցկացնում, իսկ քաղաքը՝ մանր արհեստի և վաճառականութեան։

Նոր մուտք գործող կապիտալիստական արդիւնաբերութեան զարգացման առաջին աստիճանը արդէն յղի էր իր գործունէութեան ընդլայնման սաղմերով։ Այդ սաղմերի աստիճանական զարգացմամբ էր, որ կապիտալը ներս պիտի խուժէր նահապետական կեանքի մէջ և սկսէր իր կազմալուծման պրօցէսսը։

Եօթանասնական թւականների հասարակական-տնտեսական պայմանները՝ կովկասահայ շրջանում՝ թելադրում էին լայնացնել հասարակական գործակցութեան շրջանակները։ Նոր հիմունքներով նոր յարաբերութիւնների հետ բաղխվող վաճառականութիւնն ու տակաւին մանր գործարանական բնոյթ կրող արդիւնաբերութիւնը անպայման կերպով պէտք է պահանջ առաջադրէին՝ ձևափոխել հասարակական կեանքի պայմանները։ Արտադրական նոր եղանակից բղխող նորագոյն յարաբերութիւնները հին սկզբունքների դէմ պիտի պայքար մղէին անխուսափելիօրէն։

Նոր յարաբերութիւնները կեանքի գոյութեան կռւում համապատասխան պատրաստութեամբ մարդիկ էին պահանջում։

Հասարակական շերտաւորման նորագոյն խաւերը բաղխվում էին նահապետական կեանքի բազմաթիւ նախապաշարմունքների հետ, ըստ որում և պայքարը հնի և նորի միջև աստիճանաբար զօրեղանում էր։

Հարկաւոր էր համապատասխան ուղղութեամբ լրագրութիւն, հարկաւոր էին մի շարք ուսումնարաններ, կուլտուրական կեանքի նորագոյն զէնքեր։

Յայտնի է սակայն, որ այդ էպօխայի նահապետական կեանքի պաշտպաններն էին հին վաճառականութիւնը, հողատիրութիւնն ու հոգևորականութիւնը. վերջինս իբրև կաստայական մի կազմակերպութիւն պատմական ամեն շրջանումն էլ միշտ նախապաշարմունքների կողմնակիցն ու ջերմ պահապանն է հանդիսացել։ Այստեղ էլ նա չը յապաղեց իր պատմական դերը կատարելու։

Պայքարը ուրեմն պէտք է ուղղվէր հասարակական այդ յետամնաց խաւերի դէմ։

50-ական թւականներին այս նորագոյն յարաբերութիւններից բղխող ձևերի գաղափարական պաշտպանների համար սեփական միջավայրը այնքան աննպաստ էր, որ հայկական վերածնութեան առաջին ռահվիրաները («լուսաւորիչները») անկարող եղան իրանց գործունէութիւնը կենտրոնացնել բուն երկրում։

Այդ տեսակէտից հեռաւոր գաղթավայրերն առաւել նպաստաւոր էին, որովհետև նորերի դէմ լարված անձնական դաւերը չէին կարող այստեղ հող գտնել։ Ուստի և Ստ. Նազարեանը իր ջերմ գործակիցներով ու «Հիւսիսափայլով» առաջին անգամ հանդէս եկաւ հեռաւոր Մոսկվայում։ Բայց դա 50-ական թւականներին էր, երբ հասարակական նորագոյն խաւերը արտադրական նոր եղանակի շեմքին էին կանգնած տակաւին։

Եօթանասնական թւականներին սակայն այդ վերջին երևոյթը արդէն իր զարգացման որոշ շրջանն էր թևակոխել։

Եւ հասարակական-տնտեսական այս նոր շրջանի նոր խաւերը իրանց շահերի ու ձգտումների բարդացմամբ՝ իրանց մէջ էին կրում էպօխայի առաջադիմութեան, պրօգրէսսի բեղուն ֆերմէնտները։

Արդ, այդ պատմաշրջանի գաղափարական զօրեղ արտայայտիչը պէտք է հանդիսանար եւրօպական գիտութեամբ զինված, ժամանակի ընդհանուր առմամբ լուսաւոր համարվող գաղափարներով տոգորված, միևնոյն ժամանակ ռուսական իրականութեանը լաւ ծանօթ՝ տաղանդաւոր հրապարակախօս Գր. Արծրունին։

Նա ասպարէզ մտաւ իր կտրուկ ու շեշտակի պօստուլատներով։

Նահապետական կեանքը՝ խճողված կրօնական նախապաշարմունքներով՝ մի խաւար, յետամնաց ասպարէզ էր ներկայացնում։ Հին սերունդը արտադրական հին եղանակի շրջանակում պարփակված՝ դէպի յետ նայող կղերի հետ կազմում էր անցեալի խոշոր պօրավիգներից մէկը։

Ուստի եւրօպական առաջադիմութեան հանդէպ՝ հայկական ասիական միջավայրը մի ճահիճ էր հանդիսանում գործելու ջերմ ձգտումներով օժտված երիտասարդ հրապարակախօսի աչքում։ Հասարակական այն ասպարէզում, որի մէջ պէտք է գործէր Արծրունին, ժամանակակից դրութեան տէրն էր հանդիսանում յետամնաց տարրերից կազմված մի խոշոր զանգուած։

Հին ձևերի, հին հասկացողութիւնների շրջանակում՝ միապաղաղ, անշարժ մի զանգուած էր դա։

Եւ այդ զանգուածի հանդէպ զարգանում էր տնտեսական նոր, ներքին և արտաքին յարաբերութիւնների գլուխ կանգնած փոքրաթիւ հասարակական մի տարր, որի ապագայ առաջադիմութիւնը պէտք է յենարան հանդիսանար Արծրունու հասարակական գործունէութեան տեսակէտից։ Լինելով այդ տարրի գաղափարական արտայայտիչը, նա միւս խոշոր զանգուածի վրա նայում էր որպէս մի քնած տարրի վրա, որին հարկաւոր էր դէպի լոյս կանչել, որի մէջ հարկաւոր էր ինքնուրոյնութեան, նախաձեռնութեան գիտակցութիւն զարթեցնել։

«Հասարակութեան մէջ կայ քնած զօրութիւն, քնած մտաւոր ոյժեր, քնած հարստութիւն, մտաւոր անմշակ, հում նիւթ»—ասում է Արծրունին «Մշակի» № 3-ում 1872 թւին։

Հարկաւոր է մշակել այդ հում նիւթը, հետազօտել նրա հարստութեան շտեմարանը։ Ու այդ հետազօտութեան ու մշակման գործումն էր գտնում նա իր կոչման նշանակութիւնը։ Ըստ որում Գր. Արծրունին չէր ընդունում հրապարակախօսութեան մէջ խրատական եղանակը։

Քարոզների դարը անցել է, ասում է նա։ Նրա կարծիքով, երևոյթների ուսումնասիրութեան անհրաժեշտութիւնն էր ամենից առաջ կանգնած հրապարակախօսի առջև։

«Խմբագրի գործունէութիւնը հասարակական ասպարիզում պիտի նման լինի բնագէտի գործունէութեանը՝ բնութեան հարստութիւնների հետազօտութեան ասպարիզում»—կարդում ենք նրա առաջնորդողի մէջ «Մշակի» № 3-ում 1872 թւին։

Այդօրինակ լօզունգներով ու ձգտումներով իջնելով հասարակական գործունէութեան ասպարէզը՝ նա գերազանցօրէն կատարեց հետազօտողի դերը իր աշխարհահայեացքի տեսակէտից անշուշտ։

Իր արտայայտութիւնների մէջ կտրուկ ու որոշ, լեզուն խայթիչ ու մորակիչ՝ երիտասարդ հրապարակախօսը ստեղծեց մի զօրեղ պայքար։

Նա անխնայ կռիւ յայտարարեց հասարակական միապաղաղ զանգուածի իդէօլօգներին, խաւարամիտ, մորակեց պորտաբոյծ կղերականութեանը, ծաղրեց, քննադատեց այդ երկու տարրերի մտաւոր աղքատութիւնն ու օբսկուրանտիզմը, կղզիացումն ու մտավախութիւնը։

Եւ այդպիսով իր դէմ նա զինեց բոլոր յետադէմ հայ-քրիստոնեայ լուսաւորչականներին։

Իր դիրքը նա բնորոշեց «աշխատող» և «հետազօտող» մակդիրներով։

«Երէկ մենք կտակարանական ազգ էինք,—ասում է նա։

«Այսօր մենք ազգայիններ ենք։

«Էգուց մենք պէտք է աշխատողներ դառնանք»։ («Մշակ» № 1, 1872 թ.)։

Եւ յիրաւի՝ Գր. Արծրունին իր նորագոյն «Մշակով» մի անխոնջ մշակ էր հասարակական ասպարիզում. նա գործում էր աննկուն եռանդով, նա վառված էր առաջադիմական գաղափարներով։ Եւրօպական մտքով նա իսկական ռադիկալ էր՝ դեմօկրատական տենդենցներով, ինչպէս այդ վկայում են նրա առաջնորդողները։

Նա առանձնապէս շեշտում էր, որ մի ժողովրդի առաջադիմութիւնն ու բարգաւաճումը կախված է այն աշխատանքից, որ գործ է դրվում այդ ուղղութեամբ։

«Պարոններ, չը մոռանանք,—ասում է նա,—որ մեր դարը գործնական դար է» («Մշակ» № 7, 1872 թ.)։

Նոր զարգացող կապիտալիզմից սպասվող «վերահաս վտանգը» նահապետական կեանքին սպառնացող՝ իսպառ չը նշմարող օբսկուրանտները հանգիստ ու անխռով պահպանում էին իրանց՝ նախապաշարմունքներով պարուրված կեանքի սահմանները, որտեղ անշարժութիւնը կատարեալ էր։

Արծրունին տեսնում էր, թէ ինչպէս հասարակական տնտեսական կացութիւնը իր մէջ կրում է զարգացման բոլոր սաղմերը, թէ ինչպէս կեանքը թեքվում է դէպի կապիտալիստական կարգերը, մինչդեռ պահպանողական խմբակը «հասարակական քնած ոյժերի» վրա մի աւելորդ թմբիր էր ուզում տարածել։

Նա ձեռնոց էր շպրտել այդ մարդկանց, ընդգծելով նրանց «կարճատեսութիւնը», յետամնացութիւնն ու թմրութիւնը։

Հարկաւոր էր մրցում, հարկաւոր էր շարժում, շահերի բաղխում, արդիւնաբերութեան զարգացում, նախաձեռնութեան ոգու արտայայտութիւն և այլն։

«Շարժումը մեր պարտաւորութիւնն է,—շեշտում է նա,—անշարժութիւնը ձեր իրաւունքն է»։ («Մշակ» № 5, 1872 թ.)։

Բայց Արծրունին իր գործունէութեան սկզբնական շրջանում կողմնակից չէր խոշոր արդիւնաբերութեան, որովհետև վերջինիս բերած հետևանքները նա համարում էր աւերիչ՝ բանւոր դասակարգի համար։

Այս պարագայում անշուշտ որոշ ազդեցութիւն ունեցած կը լինէր նրա վրա ռուսական իրականութիւնը, որտեղ խոշոր կապիտալիզմի դէմ մեծապէս դիմադրում էր նարօդնիկական հոսանքը։

Կապիտալիզմը աւերածութիւն է գործում գիւղական բարքերի մէջ, աւերում տնտեսութիւնը, ապականում մթնոլորտը, կլանում առողջ գիւղական տարրը. վերջապէս կապիտալիզմը մանր արհեստաւորական միութիւնները ոչնչացնում է ու նրանց զրկելով սեփական գործիքներից՝ դարձնում է աղքատ, սեփականազուրկ բանւորներ։

Ահա այս երևոյթի դէմ էր, որ զինվել էին ռուս ինտելիգենտները 60—70-ական թւականներին. գրական ասպարէզը հեղեղվել էր այդ հոսանքի տուած քննադատութիւններով։

Արծրունին չէր կարող անծանօթ մնալ այդ իրականութեանը։ Իր գործունէութեան սկզբնական շրջանում անշուշտ խոշոր չափով ազդած կը լինէր այդ երևոյթը նրա վրա։

Միւս կողմից լինելով լաւ ծանօթ եւրօպական արդիւնաբերական կեանքին, նա արդէն գիտէր, թէ կապիտալիստական խոշոր արդիւնաբերութիւնը ինչ ծանր կացութիւն է ստեղծում աշխատող դասի համար։

Արծրունու գրած «Եւրօպայի աշխատողների ընկերութիւնները» և «Պատերազմից յետոյ»*) յօդուածներից (1872 թ. «Մշակ» № 17) երևում է, թէ որքան են զբաղեցրել այդ խնդիրները նրան։ Այդ յօդուածներում նկարագրելով եւրօպական բանւոր դասակարգի ծանր դրութիւնը, Արծրունին կանգ է առնում այն երևոյթների վրա, որոնք պատճառ են դարձել մի շարք հալածանքների, որոնց ենթարկվում են բանւորներն ու նրանց պարագլուխները, ինչպէս Բեբելն ու Լիբկնեխտը (այն ժամանակ տակաւին երիտասարդներ)։ Տեսնելով սեփականազուրկ բանւորականութեան վիճակը և շեշտելով որ դա կապիտալիստական խոշոր արդիւնաբերութեան հետևանք է, նա մի րոպէ մխիթարվում է, երբ տեսնում է, թէ իր միջավայրը տակաւին ազատ է այդ բացասական երևոյթից։

«Մենք ասում ենք,—գրում է նա իր յօդուածներից մէկում,—որ մեզ մօտ չը կայ միայն գործարանների մշակների դասը, այսինքն Եւրօպայի հետ համեմատելով՝ մեր հասարակական կեանքի մէջ մի վատ կողմը պակաս է» («Մշակ» № 23, 1872 թ.)։

Իրականութիւնը սակայն այլ բան էր թելադրում, և նա բառացի կերպով այնպէս չէր, ինչպէս կարծում էր Արծրունին։ Սակայն չէ որ նա իր կոչման նշանակութիւնը գտնում էր հասարակական երևոյթների հետազօտման, ուսումնասիրութեան մէջ։

Եւ Արծրունին ուշադրութիւն դարձրեց այն երևոյթի վրա, որ Թիֆլիսում արդէն գոյութիւն ունեն գործարաններ և հետզհետէ հիմնվում են, որոնց բանւորների վիճակը վերջին ծայր անմխիթար էր։ Նա բերում է նրանց աշխատանքի ժամերի թւի մեծութիւնը, պայմանների ծանրութիւնը և օրավարձի չափազանց աննշան լինելը։ Այդ երևոյթը նա համարում էր անարդար և առաջարկում էր աշխատանքի ժամերը կրճատել, իսկ վարձագինը բարձրացնել։

Երևի՝ ինչ սոսկալի պայմանների մէջ են եղել այդ ժամանակվայ բանւորները։ Օրական 15—16 ժամ աշխատանք՝ ամսական 14 ր., և աւելի պակաս, աշխատավարձով։ Կին-բանւորուհին առաւել վատթար

---

*) Ֆրանս-պրուսական պատերազմն է ակնարկում։ Ս.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՄ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ՄԱՍԻՆ

Ես 9 տարեկան էի, երբ հայրս վախճանվեց։

Զքաւորութեան պատճառով նոյն տարի մայրս ինձ դուրս բերեց Սղնախի ծխական դպրոցի առաջին պատրաստականից, որտեղ սովորել էի միայն այբուբենը, և տուեց մի խանութում ծառայելու, որ գոնէ կարողանամ ինձ պահել։ Եւ այդպէս՝ համարեա մինչև այսօր մնացի ուսումից զուրկ գործակատար։

Թէ իմ պատրօնի և թէ մանաւանդ իմ կեանքից հետաքրքրական բաներ շատ ունեմ պատմելու, բայց այդ թողնում եմ Գ. Բաշինջաղեանին, որ շատ մօտիկ ծանօթ է թէ իմ անցեալի և թէ ներկայ կեանքի հետ։ Գուցէ մի օր նա մտցնէ իր յիշողութիւնների մէջ։

Իսկ ես համառօտ կը պատմեմ իմ յիշողութիւնները Գր. Արծրունու կեանքից։

⁂

1876 թ. տեղափոխվեցի Թիֆլիս։

Այն ժամանակից Գր. Արծրունու անունը այնքան էր տարածված, և այնքան էին վիճում մարդիկ իրար հետ, գովելով թէ յարձակվելով, որ իրան չը տեսած՝ ես սիրահարվեցի նրա վրա։

Սկզբում, երբ «Մշակ» էի կարդում, ամեն բան չէի հասկանում, բայց այնքան կարդացի, որ սկսեցի բոլորը հասկանալ. այնպէս որ՝ «Մշակը» ամբողջութեամբ կլանում էի։

Յետոյ աւելի ևս ուժեղացաւ իմ սէրը և յարգանքը դէպի Արծրունին և անձամբ ծանօթանալու ցանկութիւնը։

Նա դարձաւ իմ իդէալը. և վայ նրան, ով կը համարձակվէր նրան զրպարտել—ինչպէս անում էին նրա թշնամիները, երբ վէճով չէին կարողանում յաղթել—զրպարտել մանաւանդ իմ ներկայութեամբ։

1884 թւին Արծրունին, ամբողջ կարողութիւնից զրկվելով, «Մշակի» հրատարակութիւնը դադարեցրեց և յանձնեց Րաֆֆուն, Գ. Միրզոյեանին և Ն. Աբէլեանին հրատարակելու համար։ Սրանք շատ էին խորհրդակցում, բայց ոչինչ չը կարողացան անել և ոչ մի համար էլ չը կարողացան հրատարակել, մինչև Յ. Տէր-Մարկոսեանը համոզեց Արծրունուն, որ գայ «Մշակ» լրագիրը վերսկսելու, որովհետև ժողովուրդը անհամբեր սպասում էր «Մշակի» նորից լոյս տեսնելուն։

1885 թւին Արծրունին վերադարձաւ արտասահմանից և իբրև յայտարարութիւն բաց թողեց մի համար, որ ընդունվեց մեծ ուրախութեամբ, և յետոյ կանոնաւորաբար հրատարակեց՝ սկսած 1886 թւի յունվարից։ Հէնց այս համարի առիթով ես մի ոտանաւոր գրեցի «Մշակ» վերնագրով՝ նուէր Գր. Արծրունուն՝ և շրջանակով ուղարկեցի խմբագրատուն։

Երկու օրից յետոյ յիշատակվեց «Մշակի» մէջ։ Եւ հասկանալի է, որ իմ ուրախութեանը չափ ու սահման չը կար։

Մի քանի օրից յետոյ ես մտայ խմբագրատուն բաժանորդ գրվելու։ Արծրունին, ինչպէս սովորութիւն ունէր, դուռն ինքը բացեց։ Երբ ազգանունս յայտնեցի, Արծրունին իմացաւ, որ ոտանաւոր ուղարկողը ես եմ եղել։

Այնուհետև յաճախ էի տեսնվում Արծրունու հետ, որը ընդունում էր ինձ շատ սիրալիր։ Մի օր նա ինձ ասաց, որ շաբաթ գիշերները ինքն ազատ է, եթէ ուզենամ՝ կարող եմ լինել իր մօտ։

Մի քանի ժամանակից յետոյ շատ բարեկամացանք, այնպէս որ ամեն շաբաթ երեկոները լինում էի իր մօտ։ Երբ զանգը քաշում էի, նա, իմանալով որ ես պէտք է լինեմ, առանց հարցնելու դուռն ինքն էր բաց անում։ Բայց մի շաբաթ գիշեր շատ զարմացայ, որ առանց հարցնելու դուռը չը բացվեց. հարցրի՝ գուցէ մի բան է պատահել, որ մինչև ձայն չը տուի՝ դուռը չէր բացել։ Արծրունին ծիծաղելով ասաց, որ ոչինչ չէ պատահել, միայն կէս ժամ առաջ առանց հարցնելու՝ դուռը բաց էր արել, և իմ փոխարէն մէկ ուրիշն էր մտել։ Եւ սկսեց իր գեղեցիկ կատակներով նրա նման խօսել և պատմել նրա մասին։ Զարմանալի աջող ձևացնում էր Ալ. Քալանթարին, Ստ. Լիսիցեանին, Մկրտիչ Նաւասարդեանին և Ստ. Ղոնդախսազեանին։

⁂

«Մշակը» դառաւ իմ ուսուցիչը և խմբագրատունը՝ ուխտատեղիս։ Արծրունու ազնիւ աչքերը և խոշոր դէմքի արտայայտութիւնը ներշնչում էին ինձ, որ գերի լինեմ իմ համոզմունքին, երբէք չը դաւաճանեմ իմ գաղափարներիս և զգացմունքներիս, ոչ մի պայմանով չը խոնարհվեմ դիմակաւորների առաջ, չը շողոքորթեմ և երբէք չը կեղծեմ։ Ահա նրա կտակը, որ երբէք չեմ մոռանում, բայց ես ինքս չեմ զգում, թէ կատարում եմ թէ ոչ։

«Մշակը» նորից հրատարակվեց, բայց Րաֆֆին այլ ևս չաշխատակցեց «Մշակին» և իր «Սամուէլ» վէպը տպեց «Արձագանք» լրագրում։ Մի օր, ուրբաթ գիշեր, Րաֆֆու մօտ էի. նա սաստիկ գանգատվում էր «Արձագանքի» խմբագրից։ Անբաւականութեան պատճառը չէր ասում։ Երբ ես հարցրի, թէ ինչու «Մշակից» ձեռք վերցրեց, նա թէև Արծրունու մասին պատկառանքով խօսեց, բայց և այնպէս յայտնեց սաստիկ անբաւականութիւն, որ առանց իր հետ խորհրդակցելու՝ վերսկսել էր «Մշակը» և յետոյ իրան հրաւիրել։ Ես կողմնակի կերպով գիտէի, որ Արծրունին սաստիկ անբաւական էր Րաֆֆուց, բայց Րաֆֆուն խրախուսելու համար ասացի, որ Արծրունին նրա մասին միշտ լաւ է խօսում. այսպէս ասելով՝ այնպէս նկատեցի, որ փոքր ինչ ուրախացաւ։

Իսկ շաբաթ գիշեր մտայ Արծրունու մօտ։ Զանազան բաներ խօսելուց յետոյ հարցրի Րաֆֆու մասին. նա թէև չէր ուզում բան ասել, բայց շատ խնդրելուցս յետոյ պատմեց, որ երբ արտասահմանից վերադարձել էր, հրաւիրել էր Րաֆֆուն «Մշակին» աշխատակցելու. բայց նա, գիտենալով որ առաջվայ նման առատ չէ կարող վարձատրվել, մերժել էր։ Րաֆֆու գրած նամակի բովանդակութիւնից հասկացվում էր, թէ՝ քանի որ Արծրունին կարողութիւնից զրկված է, ինքը չէ կարող աշխատակցել։ Շատ հասկանալի էր, որ Արծրունին սաստիկ վիրաւորված պէտք է լինէր Րաֆֆու վարմունքից և բոլոր յարաբերութիւնները կտրէր նրանից, ինչպէս որ արաւ. «Մշակը» հրատարակվեց առանց նրանց մասնակցութեամբ աւելի փառաւոր. միայն Յ. Տէր-Մարկոսեանը մնաց առաջվայ նման հաւատարիմ և անկեղծ աշխատակից։ Արծրունու նախկին ռուս ծառայ Տրոֆիմը Արծրունու վերադառնալուց յետոյ նորից իր ծառայութիւնն առաջարկեց առանց մի որևէ վարձատրութեան։ Արծրունին ընդունեց, բայց վարձատրելով այնպէս, ինչպէս առաջ։ Այդ հաւատարիմ ծառայ Տրոֆիմը Արծրունու մահից յետոյ էլ այնքան ծառայեց, մինչև որ ինքն էլ վախճանվեց։

Յօգուտ «Մշակի» սաստիկ ուզում էի, որ Արծրունին և Րաֆֆին հաշտվէին։ Ես աշխատում էի նրանց մօտեցնել նորից։ Ես կարծում էի, որ երկուսին էլ մեղմացրել էի, և, իմ կարծիքով, բաւական էր, որ մէկ ազդեցիկ մարդ միջամտէր՝ կը հաշտվէին։ Գ. Միրզոյեանի հետ շատ անգամ խօսել եմ, որ գոնէ այնպիսի մէկին, որ նրանց վրա ազդէ։ Հէնց այդ ժամանակին դժբաղդաբար Րաֆֆին հիւանդացաւ և 1888 թ. ապրիլի 24-ին վախճանվեց։

⁂

Երբ որ Պետրոս Ադամեանը լինում էր Թիֆլիսում, թէ ներկայացումից յետոյ և թէ ուրիշ գիշերներ, իր ցանկութեամբ, միշտ նրա մօտն էի լինում և նստում էի երբեմն մինչև ժամը 1-ը, իսկ կիրակի օրերը նաև ցերեկով էի լինում։ Մի կիրակի օր, կարծեմ 1888 թւի Մեծ-Պասին, Գր. Արծրունին եկաւ Ադամեանի մօտ նկարվելու։ Ադամեանը նկարել գիտէր և Արծրունու նկարը քանի օր առաջ սկսել էր։ Խօսակցութեան մէջ Ադամեանն ասաց.

— Պարոն Արծրունի, Սանդրօն ձեզ այնպէս է սիրում, որ ես նախանձում եմ։

Արծրունին ժպտալով պատասխանեց, որ չէ կասկածում. միայն աւելացրեց, թէ ինչու է նա նախանձում, «երբ սրան անուանում են Ադամեանի Սանդրօ և ոչ Արծրունու»։

Ինձ համար, անշուշտ, այս խօսակցութիւնը շատ հաճելի էր լսել այնպիսի մեծ մարդկանցից։

Ադամեանը այդ ժամանակները մի մեծ շուն էր նուէր ստացել։ Այդ շունը ինձ հետ էլ այնպէս սովորել էր, որ երբ ես դուրս եկայ պատշգամբ, նա էլ հետևեց ինձ և դռան մօտ նստեց։

Կէս ժամից յետոյ, երբ ուզում էի դուռը բանալ ներս մտնելու համար, շունը հաջելով կոնիցս այնպէս բռնեց, որ շորերիս հետ միասին կուռս էլ ծակեց։ Իսկոյն դուրս եկան։ Երբ տեսան, որ ես եմ, Ադամեանը շան վրա սաստիկ բարկանալով ասաց.

— Դու անպիտան շուն, չը գիտես, որ սա իմ Հօրացիոն է. ինչպէս ես համարձակվում իմ սիրելի Սանդրօյին խածնել։

Եւ ինձ դիմելով՝ համոզում էր, որ չը վախենամ, որովհետև շունը կատաղած չէ։ Իսկ ես ծիծաղելով ասում էի, որ ամենևին չեմ կասկածում, թէ շունը ինձ ուրիշի տեղ էր ընդունել։ Եւ այդպէս էլ էր, երբ տեսաւ, որ ինձ համար հոգս էին քաշում, շունն էլ աչքեր ծռած նայում էր և կարծես ուզում էր ներողութիւն խնդրել, որ սխալվել է։ Ադամեանն իսկոյն իր ծառայ Ղազարին ուղարկեց դեղ և բամբակ բերելու։ Մինչև ծառայի գալը՝ Ադամեանը նորից շան վրա սկսեց բարկանալ, իսկ Արծրունին ջրով լիք շիշը վերցրեց՝ արիւնոտ ձեռքերիս վրա ջուր ածելու, բայց ես չէի ուզում թոյլ տալ։ Միայն ինքը պնդեց և ասաց.

Թող ածեմ. գոնէ մէկ օր կասես, որ Գր. Արծրունին իմ ձեռքերին ջուր է ածել։

Դրանից յետոյ միայն հնազանդվեցի, ասելով որ եթէ ինքը ցանկանում է՝ թող իր կամքը լինի. և այդպէս՝ Արծրունու օգնութեամբ արիւնոտ ձեռքերս լուացի։ Ղազարն էլ դեղը բերեց, և վիրաւոր կուռս կապեցին և իրանք սկսեցին խօսել չեմ յիշում մի ինչ-որ պիէսի մասին։ Մի քառորդ ժամից յետոյ Ադամեանը Ղազարին յայտնեց, որ շունը վերադարձնէ տիրոջը, և Արծրունուն նորից հրաւիրեց նկարվելու։ Նկարը հէնց նոյն օր վերջացրեց։ Այդ գեղեցիկ նկարն այժմ գտնվում է «Մշակի» խմբագրատանը։

⁂

Մի անգամ, կարծեմ Զատիկ օրն էր,

պայմանների մէջ է եղել. Արծրունու հաշուով՝ նրա աշխատանքի ժամը գնահատուելիս է եղել միջին թւով 1½ կոպ.։ «Ահա այսպէս ենք մենք հոգում այն էակների մասին, որոնց աշխատանքի միջոցով մենք հարստանում ենք...»,—ասում է Արծրունին իր յօդուածներից մէկում։

Եւ ի նկատի ունենալով, ինչպէս մի անգամ նկատեցինք, եւրօպական խոշոր արդիւնաբերութեան այդ բացասական կողմը, որը կարող էր առաջ գալ նաև Կովկասում, Արծրունին իր գործունէութեան առաջին շրջանում առաւելապէս կողմնակից էր մանր արդիւնաբերութեան զարգացման և մանր արհեստաւորական միութիւնների, որով նա յոյս ունէր այդ բացասական երևոյթի առաջն առնել...

Տեղի սղութեան պատճառով հնարաւորութիւն չունենալով ընդլայնել յօդուածիս սահմանները, պէտք է շեշտեմ, որ Արծրունու տնտեսական հասարակական կեանքի նկատմամբ ունեցած աշխարհահայեացքը ընդհանուր առմամբ դա էր, որից անմիջապէս բղխող բոլոր սկզբունքները նա պաշտպանում էր անյողդողդ եռանդով։

Եւ այդ աշխարհահայեացքը իր բոլոր սկզբունքներով պաշտպանվում էր «Մշակում» այն չափով, որ չափով դա անխուսափելիօրէն կարևոր էր երկրի կապիտալիստական արդիւնաբերութեան զարգացման համար՝ վերջինիս հետ կապված հասարակական առաջադիմութեան հետ միասին։

Եւ «Մշակը» իր խմբագրի յետագայ գործունէութեամբ և ապա՝ եղաւ այդ սկզբունքների արտայայտիչը, հարկաւ արտայայտութիւնների զանազան վարիանտներով, շատ անգամ համակերպվելով «ժամանակի» առաջադրած պայմաններին։

Բայց և «Մշակը» իր արմատական (ռադիկալ) խմբագրով եղել է այն շրջանը, որի բովում դաստիարակվել ու կրթվել են թէ այստեղի և թէ արտասահմանի (Թիւրքահայ դատի խնդրում) կովկասահայ ազգային գործիչների առաջին շարքերը...

—

Անցել է մի ամբողջ քառասուն տարի։

Հասարակական - տնտեսական կեանքը այժմ արտադրել է նորագոյն պահանջներ։ Գոյութեան կռիւը ծանր կերպարանք է ստացել, մրցման հնարաւորութիւնը գերազանցօրէն բարդացել։

Շերտաւորումը առաւել կտրուկ արտայայտութիւն է ստացել։ Կեանքի նորագոյն պահանջները նոր նոր երևոյթներ են հրապարակ հանել։

Կեանքը էվօլիւտիվ է. շրջափոխիչ էպօխան բնականաբար իր ժամանակի առաջխաղաց տարրն է պահանջում։

Կենսունակ լինելու համար չը պէտք է նայել յետ և կամ կանգ առնել միևնոյն կէտի վրայ։ Զարգացման վտանգաւոր հանգամանք է այդ դրութիւնը։ Պէտք է հայեացքը բևեռել դէպի առաջ, դէպի մի որոշ ապագայ։

«Ազգային» շրջանակը այլևս գոհացուցիչ չէ. երևոյթների վրայ չը պիտի նայել միապաղաղ գանգուածների տեսակէտից։

Այո՛

«Երէկ մենք կտակարանական ազգ էինք։

«Այսօր մենք ազգայիններ ենք։

«Էգուց մենք պէտք է աշխատողներ դառնանք»։

Շատ բնորոշ են Արծրունու այս ձևակերպումները։ Սակայն՝ մենք պէտք է աշխատող դառնանք ոչ 70-ական թւականների մտքով, այլ աշխատողներ՝ շահագործման պրինցիպի վերացման մտքով...

Առաջխաղացութեան տարրը ապագայի կենսունակութեան մէջ է։ Վաղ անցեալի ապագան եղել է մօտ անցեալը. մօտ անցեալինը՝ ներկան է։ Կեանքը առաջ է շարժվում իր ընթացքով։

Ներկան ապագայի վրայ է բևեռել իր խորաթափանց հայեացքը։ Հասարակական իրական կեանքի գաղափարական անդրադարձման ապագայի գրաւականը՝ նորագոյն գործիչ սերունդն է իր նոր մտածելակերպով, այն սերունդը, որը ապշերօնեան նկուղներում ու սև-քաղաքների յատակներում այսօր ուրուագծում է ապագայ կեանքի բազմերանգ հեռանկարը...

Կեանքը՝ շարժումն է. շարժումը՝ յարաշարժ է. ուրեմն կեանքը յարաշարժ է։

Ով շարժվում է, նա կեանքի հետ է գընում, ով չէ շարժվում, կեանքը նրա մօտովն է անցնում։

Կեանքի շարժումը՝ նրա ձևափոխումն է արտաքուստ ու ներքուստ։ Այն շարժումը, որ կարևոր էր 70—80-ական թւականներին, արդէն կատարվել է։ Նա անընդհատ առաջ է ընթանում՝ այս քսաներորդ դարում մարդկութեան կեանքում անօրինակ յեղաշրջումներ կատարելու համար։

Շարժման իւրաքանչիւր էպօխան իր նախորդին լիակատար իրաւունք ունի ասելու, ինչպէս այդ ասել է տաղանդաւոր Գր. Արծրունին.

Շարժումը մեր պարտաւորութիւնն է։
Անշարժութիւնը ձեր իրաւունքն է։

Նորագոյն կեանքը իր խորունկ ծալքերում նոր ձևեր է դարբնում. նոր ձևերի անդրադարձումը կարող է լինել միմիայն նոր խօսքերով։

Եւ գալիս են նոր կեանքն ու թարմ ոյժերը։

Նոր կեանքը նոր խօսքերով, թարմ ոյժերը՝ թարմ մտքերով։

Սուրխաթեան

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Անուշ օրօրի ձայնն էր շշնջում մեր ականջին. Հայկն էր մերը, Արամն ու Տիգրանները, Արտաշէսներն ու Տրդատը, Պարթև Հայրապետները, առիւծ Մամիկոնեանները, Կամսարական քաջերի համաստեղութիւնը, Բագրատունիք և Ռուբինեան թագապսակ գլուխները։ Դրախտն էլ նաև մեր չորս գետերն էին ոռոգել։

Անուշ օրօրի ձայնով այդ բոլորը շշնջում էին մեր ականջին շշնչողները. և Սօսանուէր անտառների սօսափիւնով,—այդ դիւթական մրմունջն ևս ներդաշնակվելով նոյն անուշիկ օրօրին,—մենք վաղըրդեան փառքի, մեր նախնիների քաջագործութեան քունն էինք քնած, երբ յանկարծ շառաչից քո խարազանի ձայնը։

Ձեր նախնիքը մեծ էին, մեծ. իսկ դուք ինչ էիք, դուք, մրափողներդ անփառունակ. արթնութեան ժամանակ երկպառակներդ. գործելու ժամանակ իրար ոտի տակ փոս փորողներդ, մրցութեան պահին մէկզմիւսից արդիւնք ոտի տակ կոխողներդ. իրար անվերջ մրոտողներդ. գործակցելու անհրաժեշտ պարագայում անմիաբանութեան, անմիաշնչութեան անյաղթելի և ամենադեգ հերոսներդ, որոնց հանդէպ խոնարհում են մինչև իսկ Բաբելի աշտարակաշինութեան խօլ հսկաները. օտարի հարուածի տակ ստրկաբար գլուխ խոնարհողներդ, իսկ միմեանց դէմ կանգնած՝ գազանաբար իրար պատառողներդ. վիճելու և բանակռուի ժամանակ ամպրոպներից իրար դէմ որոտացողներդ, և միաժամանակ գարշ տղմերից իրար վրայ կոյտեր ծեփողներդ. պատռած բերանով արդարութիւն և իրաւունք ղօղանջողներդ, իսկ ուր ձեր աչքի փուշ անմեղը և անարգներից անաստուածօրէն զրպարտվածը արդարութիւն և իրաւունք է սպասում ձեզնից՝ դուք եօթն սարերի ետև էք վանում և՛ արդարութիւն և՛ իրաւունք։

Եւ այսօր, անցած հոգի՛, վատթար է քան երէկ։

Ո՜ւր իջած պիտի լինենք, որ Գէորգ Չորրորդի ժամանակաշրջանը մեր աչքի առաջ իբրև ոսկի հանդիսացող նկատենք։

Գրականութեան այն եռման ու զեռման ժամանակը, դպրոցների բարգաւաճ ծաղկման միջոցին, զարթման այն ոգելից ժամին, ահա այն ժամանակաշրջանին շաչում էր ու շառաչում քո խարազանը։ Հայի աբոտը, հայի թերութիւնը, հայի պառտանքը, նրա իր նախնիների բարձերի վրայ յենված սնոքալը խարազանվում էր չարաչար։

Մեծ էին ձեր նախնիք, հա՛, դուք ինչ էք այսօր, դո՛ւք, այն մեծերի այժմ ճղճիմացած վիժուկներդ։ Դո՛ւք, որ աւելի նրանց անունը գիտէք, այն էլ աւելի լսելով, ու նրանց մեծութիւնից անյատակ անդունդներով տարանջատված էք, և այդ ստորին վայրերից ձեր աչքը այն բարձունքների վրայ նրանց էական մեծութիւնը ընդնըշմարել իսկ տկարանում է։

Եւ քո խարազանի շաչիւնը անընդհատ էր, և զկծված հոգիների ու մարմինների մրմուռը սաստկապէս զգալի։ Եւ սակայն այն ժամանակն էր որ մեր գաղափարական բարձունքների վրայ ճեմում էին Ալիշանները, Խրիմեանները, Սրուանձտեանները, Պէշիկթաշլեանները, Տերենցները, Րաֆֆիները, Պատկանեանները, Ադամեանները և մի խումբ ոչ նուազ լուսաւոր աստղեր։ Այն ժամանակն էր, որ Սունդուկեանները Պէպօներին լեզու էին տուել, և մրգավաճառը իր քրտնաթոր աշխատութեան առաջ կորացլուխ կանգնեցնում էր դրամի սոնք ագնուականին։ Այն ժամանակ էր, որ հայ աշուղը Ջիւանիով բարձրանում էր դէպի Գողթան-երգիչը, դէպի Թորոսաղբիւրը։

Եւ սակայն շաչում էր քո խարազանը, և հողմերը նրա շառաչիւնը տանում էին հեռուները լսեցնելու։

Այժմ մենք մահվանդ 20-ամեակի վրայ ենք, և քո թողած այժմ արդէն 40-ամեակի դրօշակի հանդէպ։ Ո՜րքան փոխված է ժամանակն, և ո՜րքան իջած ենք մենք ու մանրացած։ Կրքերի ողողն առած է մեզ իր պտոյտների, իր յորձանքների մէջ, և տաշեղ ենք մենք՝ պղտոր ալիքներից վարված։

Այժմ, Արծրունի, մենք մեծ ենք մեծութիւնները նսեմացնելու մէջ։

Ա. Մ. Եղեկեան

«ՄՇԱԿԸ» ԵՒ ԱԶԳԵՐԻ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆԸ

«Մշակը» իր քառասնամեայ գոյութեան ընթացքում շօշափել և լուսաբանել է հասարակական բազմապիսի կարևոր հարցեր։

Բայց այդ ամենից՝ ինձ առաւելապէս հետաքրքրել է ազգերի համերաշխութեան (solidarité) խնդիրը, և ես մի առանձին ուշադրութեամբ հետևել եմ այդ հարցի նկատմամբ «Մշակի» արած հետաքրքրական լուսաբանութիւններին։ Որ դրանք պիտի հետաքրքրական լինէին, այդ ինքնին հասկանալի է, որովհետև «Մշակի» շուրջը առ հասարակ համախմբված են եղել մեր իրականութեան մէջ գործող ազատախոհ տարրերը, որոնք իրանց դաւանանքների համաձայն միշտ պիտի հնչեցնէին ազգերի համերաշխութեան և եղբայրութեան վեհագոյն կոչը միայն։

Ամեն անգամ, երբ ազգային շահերի բախումներ են առաջ եկել հարևան ազգերի միջև և կրքերը ծայր տուել, «Մշակը» թէ իր առաջնորդող և թէ այլ յօդուածներով միշտ յորդորել է՝ չը տարվել նեղ ազգայնական տենդենցներով և ծագած այդ հարցերը լուծել խաղաղ և համերաշխ կերպով, ուշադիր լինելով առողջամիտ և լայնախոհ ինտելիգենտ տարրերի յորդորներին և համերաշխութեան քարոզներին։ Մեզանից իւրաքանչիւրը, ով ուշի ուշով հետևել է «Մշակին», անշուշտ կը յիշէ, թէ նա որպիսի գովելի դիրք է բռնել ամեն անգամ, երբ ծագել է, օրինակ, հայ-վրացական յարաբերութիւնների լարումը։

Դեռ վերջերս, քաղաքային ընտրութիւնների առիթով, երբ վրաց ազգայնական թերթերը սկսեցին իրանց սովորական վայնասունը, «Մշակն» էր, որ իր յօդուածներով եկաւ ապացուցելու վրացի ազգայնականներին, թէ հայերի հոծ բազմութիւնը ամենևին էլ վրացիներին հալածելու նկատումներ չունի, այլ ընդհակառակը ջերմ կողմնակից է, որ վրացիներից արժանաւոր և ձեռնհաս անձանց հայերի կողմից ձայն տրվի։

Եւ երբ «Մշակի» արտայայտած այգօրինակ մտքերի և յորդորների հետ ծանօթացան վրացիները, նրանց այլ ևս ոչինչ չէր մնում, եթէ ոչ լիակատար գոհունակութիւն յայտնել «Մշակի» արտայայտած մտքերի նկատմամբ։

Այսպիսի դիրք բռնելով հանդերձ, «Մշակը» երբէք ձեռքից չէ տուել հայ տարրի իրաւունքների պաշտպանութիւնը, այլ ընդհակառակն նա պարզաբանել է, որ Կովկասի ազգերի, և մանաւանդ հայերի ու վրացիների, որպէս մեր երկրի դրացի ազգերի համեմատաբար աւելի կուլտուրական տարրերի, լաւագոյն ապագայի մերձաւոր իրականացումը կախումն կունենայ նրանից, թէ նրանք ո՜րչափով շուտ կը մտնեն համերաշխութեան և համագործունէութեան անհրաժեշտութիւնը և ձիգ ու ջանք կը թափեն խաւարի ոյժերի յարուցած բոլոր արգելառիթները յաղթահարելու։

«Մշակը» հետևողական լինելու համար՝ պիտի որ պաշտպանէր և արծարծել շարունակէր Գ. Արծրունու լիբերալ գաղափարները, ի միջի այլոց ազգերի համերաշխութեան հարցի վերաբերմամբ, հետևաբար այս ամենը այսպէս էլ պիտի լինէր, որովհետև այլապէս լինել կարող չէր։

Հակառակ դէպքում նա դաւաճանած կը լինէր իրան աւանդ թողնված սկզբունքներին, որպիսի դէպքում «Մշակից» կը հեռանային այն բոլոր բանիմաց գործիչները, որոնց համար թանգ են համերաշխութեան իղձերն ու ձգտումները։

Բայց մենք գիտենք, որ «Մշակը» իր գոյութեան ընթացքում երբ և առիթ է ունեցել շօշափելու այս ինքնին կնճռոտ հարցը, ամեն անգամ էլ դուրս է եկել պատւով։

Տեղը չը լինելով քննելու ազգային բաղխումները ծնող պատճառները և սրանց անմիջական ծնունդ՝ ազգերի համերաշխութեան գաղափարը, մենք՝ «Մշակի» քառասնամեայ բեղմնաւոր և արդիւնալից գործունէութեան լրացման առիթով՝ առ այժմ բաւականանում ենք մեր ստացած տպաւորութիւնները միայն արձանագրելով թռուցիկ կերպով, լիակատար յոյս ունենալով որ «Մշակը» այսուհետև ևս նոյն ուղղութեամբ առաջ ընթանալով՝ ամեն անգամ, երբ առիթ ներկայանայ, նորից և նորից կը հնչեցնէ ազգերի համերաշխութեան և եղբայրութեան փողը։

Գրիգոր Արծրունու սկսած գործը շարունակելու համար պէտք է որ «Մշակը» այսուհետև ևս բարձր ու բարձր ծածանեցնէ այն դրօշակը, որի վրայ ոսկէ տառերով արձանագրված են ազգերի համերաշխութեան և եղբայրական սուրբ սիրոյ վեհ գաղափարները։

Ցար. Գասպարեան

«ՄՇԱԿԻ» 40-ԱՄԵԱԿԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

Ես էլ՝ թէև գրող չեմ և ոչ էլ արգասաւոր թղթակից, բայց ուզում եմ «Մշակի» մեծ տօնին մասնակցել, հաշւելով այդ իմ բարոյական պարտականութիւնս։

Ես 18 տարեկան հասակում գործակատար էի մի գործարանում, և առաջին անգամ այստեղ տեսայ «Մշակը»։

Կարդացի՝ մէկ, երկու, երեք... և այլևս չէի կշտանում կարդալուց։

Նախ՝ մի մեծ դև էի կարծում լրագիր կարդալը. նիւթերը մէկ անգամից չէի կարողանում վերջացնել, բայց հետզհետէ ընտելացայ և ինձ համար պարտականութիւն էի արել ամենայն օր կարդալ, նոյնիսկ երբեմն գանգատւում էի, որ շուտ է վերջանում։

Այսօր անցել է ընդամենը տասը տարի։

Կարդում էի յափշտակված և հասկանում, որ ինձ շատ բան է պակասում։

Ուստի դիմում էի գրականութեանը և բաւականութիւն ստանում։

Այսօր ես պարտական եմ «Մշակին»։

«Մշակն» էր, որ իմ մէջ յղացրեց՝

Սիրել ազգը։

Սիրել մայրենի լեզուն։

Սիրել գրականութիւնը։

Ընդամենը տասը տարվայ կեանք ունեմ «Մշակի» հետ։

Եւ որքան մղձաւանջների ենթակայ եմ եղել...

Որքան զրկանքներ եմ կրել...

Որքան սպառնալիքներ եմ լսել...

Մէկ-մէկ հաղորդածս լուրերի համար։

Լուրեր հաղորդել, սևին սև ասել, սպիտակին սպիտակ, ու ենթարկվել հալածանքի...

«Մշակը», որ 40 տարի խաւարի դէմ է կռւել, ակօսներ է բաց արել, հասկացրել ժողովրդի ցաւը, սպեղանին ճիշդ տեղին է կպցրել... ապա որքան հալածանքների է ենթարկվել։

Բայց հէնց նա է սիրելին, նա, այն հալածեալը, որ երբէկ որոշ մարդկանց աչքի փուշն էր, այսօր հայ ժողովրդի ու հայ գրականութեան պարծանքն է [illegible], տօնելով իր 40-ամեայ գոյութիւնը։

Վ. Մարտիրոսեան

Բաթում

ԱՐՁԱԳԱՆՔ ՍԱՆԴՐՕՅԻ ԱՌԱՋԱՐԿԻՆ

«Մշակի» քառասնամեայ յօբելեանին նուիրված առաջին կիսաթերթում Սանդրօն, յայտնելով որ ինքը ստորագրվում է յօբելեանի առիթով «Մշակի» երկու համարի—մէկը իր, իսկ միւսը գիւղական դպրոցի համար—առաջարկ էր արել ուրիշներին՝ հետևելու իր օրինակին։

Սանդրօյի առաջարկին արձագանք տուեց Եղիա Քեօսէյեան և ուղարկեց երկու բաժանորդագրական վճար։

Խմբագրութիւնը կը յատկացնի նրան գիւղական աղքատիկ դպրոցներից մէկին։

Խմբագրութիւն

մտայ խմբագրատուն՝ տեսնուելու և Արծրունուն բարևելու։ Այդտեղ տեսայ դահլիճում մի բարձրահասակ մարդ աթոռի ծայրին նստած՝ շատ համեստ և քաշված. կարծելով որ գաւառացի մի վաճառական է, եկել է բաժանորդ գրվելու, մանաւանդ իբրև անծանօթ, նրան չը բարևեցի։

Արծրունին նկատեց, որ չեմ ճանաչում, ծանօթացրեց, ասելով՝

— «Մշակի» աշխատակից պ. Բաբախանեանն է։

Իսկ իմ մասին ասաց՝

— Սա էլ մեր Սանդրօն է։

«Բաբախանեան» ազգանունը ինձ անծանօթ թւաց։ Երբ Արծրունին նկատեց, որ լաւ չեմ ճանաչում, ուստի աւելացրեց՝ «Լէօ»։ Այս անունը ինձ ծանօթ լինելով, նորից ձեռք տուեցի և մի քանի համակրական խօսքեր էլ աւելացրի։

Այն ժամանակ ինչ կը կարծէի, թէ «Մշակի» պատճառով մի քանի տարուց յետոյ՝ Բաբախանեանը և ես նախ մօտիկ բարեկամներ պէտք է լինէինք և ապա, այնպիսի բարեկամութիւնից (և ի դէպ՝ նրա հարստանալուց) յետոյ, նոյն «Մշակին» դաւաճանելուն պատճառով, մասամբ էլ հանգուցեալ Սեդրակեան սրբազանի պատճառով, պէտք է բոլորովին յարաբերութիւններս կտրէի նրանից։

⁂

Կաթողիկոսական ընտրութեան օրեր էին։ Մակարի մահից յետոյ հայ ժողովուրդը պատրաստվում էր կաթողիկոսի ընտրութիւն անել։ Պայքարը շատ մեծ էր։ Մասնակցում էին բոլորը։ Մասնակցում էի և ես։

Հակառակորդները շարունակ գրում էին, որ սև-Սանդրօն է ամեն տեղ կազմակերպում, զալմաղալով է յաղթութիւն տանում։

Բայց շատ էին սխալվում։ Նրանց մարդկանց միշտ ասում էի և այժմ էլ կրկնում եմ, որ ոչ թէ սև-Սանդրօն է կազմակերպում և յաղթութիւն տանում, այլ այն երկու մեծ անունները՝ «Մշակ» և Գր. Արծրունին։ Ժողովուրդը այս անուններին էր հաւատում և ոգևորվում, սրանց համար էր հաւաքվում, կազմակերպվում և կռւելով յաղթութիւն տանում։ Սանդրօն միայն ամեն տեղ գնում և յիշեցնում էր ընտրութեան օրը, և ոչ աւելի։

Հակառակորդները եկեղեցիներում այնպիսի միջոցների էին դիմում Արծրունուն տապալելու համար, որ ես ամօթ եմ համարում յիշել։

Թէև չէին ուզում ս. Գէորգում ընտրութիւն նորից նշանակել, բայց բողոքների ազդեցութեամբ նորից նշանակեցին ընտրութիւն։ Գր. Արծրունին ինձ պատուիրեց, որ աշխատեմ, որքան որ կարելի է՝ հանգիստ անց կենայ ընտրութիւնը։ Այն օրը հաւաքվել էր ընտրողների և հետաքրքրվողների մեծ բազմութիւն։ Նախագահ նշանակված էր հանգուցեալ Գրիգոր քհ. Տէր-Բարսեղեանը։ Ինչպէս երևաց, նրան պատուիրված էր, որ եթէ նկատէ, թէ ընտրութեան հետևանքը յօգուտ իրանց չէ լինելու, ընտրութիւնը չը կայացնէ։ Այնպէս էլ եղաւ։ Երբ նկատեց ժողովականների տրամադրութիւնը, ժամը 12-ին խաբելով փախաւ, բայց Մէյդանի մօտ բռնեցինք նրան, յետ բերինք. և այն ժամանակ միայն սանձված ընտրութիւն կայացրեց, որ անցաւ ամենախաղաղ և հանգիստ։ Ժամը 7-ին արդէն ընտրութեան հետևանքը երևաց, որ մեր նշանակած մարդիկը ընտրվել են ձայների ահագին մեծամասնութեամբ։ Մէկ ժամից յետոյ գնացի խմբագրատուն։ Հէնց այն ժամանակ դահլիճում նստած էին Ա. Մ. Եղեկեան, Յ. Տէր-Մարկոսեան և չեմ յիշում ուրիշ ով, որոնք Արծրունու հետ խօսելիս են եղել այն օրվայ ընտրութեան և իմ մասին։ Զանգ տալուց՝ իսկոյն Արծրունին դուռը ինքը բացեց և երբ տեսաւ ինձ, դեռ ներս չը մտած՝ հարցրեց նրանց.

— Ի՞նչ էք կարծում ով եկաւ։

Այս ընդունելութիւնը ինձ սաստիկ ուրախացրեց։ Ներս մտայ և բարևելով բոլորին՝ ես էլ մասնակցեցի խօսակցութեանը։ Արծրունին ճաշ առաջարկեց, կարծելով որ ուղղակի գալիս եմ եկեղեցուց. շնորհակալութիւն յայտնելով ասացի, որ տուն եմ գնացել ճաշելու և յետոյ եկայ այստեղ։

Առաջնորդը մարտի 8-ին հրաւիրեց բոլոր պատուիրակներին առաջնորդարանում մասնակցելու պատգամաւորի ընտրութեան. միայն չը հրաւիրեց Լուսաւորչի եկեղեցու պատուիրակներին։ Այս կամայականութեան դէմ ահագին բողոքներ եղան, որոնք սակայն մնացին անհետևանք։ Արծրունին իր կուսակցութեան բոլոր պատուիրակների հետ միասին ժողովվեց և այն ժողովում ինքը խօսեց այսպէս.

«Երբ առանց մի որևէ պատճառի Լուսաւորչի եկեղեցու պատուիրակներին չեն ընդունում—չը նայելով որ առանց նրանց էլ մեր ձայները մեր հակառակորդների ձայներից շատ են—այդպիսի ապօրինի ընտրութեան չը պէտք է մասնակցել»։

Մի քանի պատուիրակներ ձայները հաշւելով ասում էին, թէ քանի որ յաղթութիւնը մեր կողմն է, ինչո՞ւ չը մասնակցել. բայց Արծրունին պատասխանեց.

— Ոչ, պարոններ, երբէք չեմ թոյլ տայ ինձ այսպիսի ապօրինութեամբ ընտրվել։

Յետոյ միաձայն որոշվեց, որ Արծրունին բողոքէ նախագահի առաջ և ժողովից դուրս գայ իր կուսակիցների հետ միասին, ինչպէս և բոլորի ստորագրութեամբ երկու բողոք պատրաստեն, մէկը՝ Էջմիածնի սինօդին, միւսն էլ Թիֆլիսի կօնսիստօրիայի անունով։

Այս որոշումը հէնց այն գիշերն և եթ հակառակորդներին յայտնել էին։ Այս լուրը հրապարակ հանողի մասին կասկածում էինք Ներսիսեան դպրոցի մի ինտելիգենտ ուսուցչի վրայ։ Նա իրան ձևացնում էր թունդ մշակական, բայց յարաբերութիւն ունէր այն ժամանակվայ ազդեցիկ հոգաբարձուների հետ, որոնք Արծրունու դէմ էին գործում. նա միշտ լինում էր մեր ժողովներում և այնտեղ ինչ որ խօսվում էր, միւս առաւօտեան արդէն հակառակորդներին յայտնում էր։ Արծրունին ինքն էլ կասկածում էր նրա վրայ, բայց ուշադրութիւն չէր դարձնում։ Վերջին ժողովը Մելիք-Ազարեանի տանն էր։ Երբ Արծրունին եկաւ, յայտնեցի, որ այն պարոնը այստեղ է եկել։ Սաստիկ կերպով դուրս չեկաւ։ Ուզում էր յայտնել, որ ժողովից հեռանայ, բայց ասաց, որ չարժէ, մանաւանդ որ ուրիշի տանը կարգադրութիւն անելու իրաւունք չունի ինքը։ Բժշկապետ Գասպարեանը սաստիկ զբաղված լինելու պատճառով՝ ոչ մէկ տեղ հասարակական գործերում չէր լինում։ Բայց Արծրունու հետ ամենամօտիկ բարեկամ լինելու պատճառով ջերմ մասնակցութիւն ունեցաւ նրան ընտրելու համար և մինչև անգամ մարտի 8-ին միասին եկաւ առաջնորդարան։

Երբ նախագահ Մամբրէ սրբազանը ժողովը բաց յայտարարեց, Արծրունին նախագահին յայտնեց բողոք բոլոր պատճառաբանութիւններով և աւելացրեց, որ այսպիսի ապօրինի ընտրութեան չէ մասնակցելու, և ժողովից դուրս եկաւ իր համախոհներով Վանքի բակը, որ լիքն էր հետաքրքրվողներով. սրանք ծափահարութեամբ և կեցցէներով ընդունեցին Արծրունուն։

Բոլոր դուրս եկող պատուիրակները մտան Վանքի դռան մօտ հանգուցեալ Իսահակ Բուդաղեանի տուն, երկօրինակ բողոքին ստորագրեցին և ուղարկեցին մէկը Էջմիածնի սինօդը, միւսը՝ Թիֆլիսի կօնսիստօրիան։ Իսկ մնացող պատուիրակները, որոնք կէսից էլ շատ պակաս էին, ընտրութիւն կայացրին և ընտրեցին Աբգար Յովհաննիսեանին։

Բագուից և ուրիշ տեղերից նամակներով և հեռագիրներով համակրութիւն էին յայտնում Արծրունուն՝ այդպիսի արդար քայլի համար։

Լուսաւորչի եկեղեցու պատուիրակներից մէկը՝ հանգուցեալ Մելիք-Այվազեանը պատմում էր ինձ, որ «Արծրունին այնքան ձայն ունենալով՝ չէր կարծում, թէ մեր պատճառով կը բողոքէր և առանց ընտրվելու ժողովից կը հեռանար. հիմա արդէն համոզված եմ, որ նրա խօսքը և որոշումը որոշումն էր և նա գերի է իր համոզմունքի»։

⁂

Սինօդին ուղարկված բողոքի պատճառով, սինօդի անդամները բաժանվեցին երկու մասի։

Շատ դժուարութեամբ բեկանվեց ապօրինի ընտրութիւնը, և սինօդի կարգադրութեամբ ուղարկվեց սրբազան Աղաւնեանը՝ նոր ընտրութիւն կայացնելու իր նախագահութեամբ։ Սրբազանը իջևանեց «Գրանդ-Օտել» հիւրանոցում։ Ընտրութիւնը վերջացաւ յօգուտ Արծրունու։

Թիւրքիայից եկած պատգամաւորները այնտեղ ներկայ էին։ Նրանք զարմացած նայում էին ժողովրդին, թէ ինչպիսի ազմուկներով էին ուղեկցում Արծրունուն մինչև խմբագրատուն և այնտեղ էլ հազարաւոր մարդիկ գալիս էին շնորհաւորելու։

Արծրունու ընտրվելուց յետոյ՝ աւելի ստոր միջոցների դիմեցին. սպառնում էին անստորագիր նամակներով, գրում էին, որ «եթէ տեղից շարժվել ես Էջմիածին գնալու համար, շատ տխուր բաներ կարող են պատահել. խորհուրդ կը տանք, որ հրաժարվես պատգամաւորութիւնից», և հազար մի այսպիսի բաներ։

Մէկ օր խմբագրատան մօտ պատահեցի հանգուցեալ Թարխանեանին։ Սա խորհրդաւոր կերպով պատմեց, որ Արծրունու մասին վատ լուրեր է լսում, և աւելացրեց, որ «ես խորհուրդ կը տամ՝ հրաժարվի Էջմիածին գնալուց. թէ չէ՝ կարող են ճանապարհին վտանգներ պատահել»։ Պատասխանեցի, որ, այո՛, այդպիսի բովանդակութեամբ շատ նամակներ է ստանում Արծրունին, միայն բոլորն էլ անստորագիր. ուրեմն այդ՝ նամակ գրողները ազգանուն չունեն, ինչպէս նաբիճվարները (ապօրինի զաւակներ)։ Եւ ապա աւելացրի.

— Վաղը գնալու ենք Էջմիածին. թող այն նաբիճվարները մեր առաջը կտրելու գան։

Այն նամակների հեղինակներից մէկն էլ ինքը Ալ. Թարխանեանն էր։ Նրա կարծիքով՝ Արծրունին երկիւղից պէտք է հրաժարվէր պատգամաւորութիւնից։

Հէնց նոյն օրը Միքայէլեան փողոցի այգիներից մէկում, ի պատիւ Արծրունու, ճաշ կար, որտեղ մասնակցում էին բազմաթիւ վաճառականներ և ինտելիգենցիան։ Սեղանի վրայ ծառայում էինք, հանգուցեալ Աղ. Մելիք-Այվազեանը, Յակոբ Յակոբեանը (Կակալ) և ես։ Բոլորն էլ ուրախ տրամադրութեամբ, կենացներով, ճառերով և կատակներով զուարճանում էինք։

Սանդրօ

(Վերջը միւս անգամ)

Типографія канцеляріи